№ 233 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23

1905
ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23 № 233

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վանդի առաջ. Վերջին տեղեկութիւններ. Թիֆլիսի հայերի և Թուրքերի մէացեալ ժողովը. Ադէաը Գանձակում. Գանձակի դէպքեր. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ընթերցողի օրագիրը. Վանդի շրջանից. Խայտառակութիւնն զինուորական դատարանի դրօշակի տակ. Ներքին լուրեր. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎՏԱՆԳԻ ԱՌԱՋ

Մենք կանգնած ենք մեծ վտանգի առաջ։

Այն աղէաը, որ սկսվել է Գանձակում և սուր ու սոսկալի բնաւորութիւն ունի, կարող է դառնալ չափազանց փոթորկից մի արհաւիրք և ստեղծել մի այնպիսի դժոխք, որ կը գերազանցէ մինչև այժմ եղածները։

Պէտք է շտապել սկսած աղէաի առաջն առնել, որքան կարելի է շուտով։ Գանձակի կոտորածը և աւերը կարող են ալիքանման անցնել գիւղերը և ամբողջ շրջանները սրի, կրակի ու կողոպուտի ասպարէզ դարձնել։

Գանձակից ստացած հեռագիրները, Գանձակից և նրա շրջակայքից եկողները սարսափելի գոյներով են նկարագրում իրերի դրութիւնը։ Ցարձակվողների կատաղութիւնը հասել է վերին աստիճանի և գազանութեան արտայայտութիւնները չափազանց սուր և վայրենի բնաւորութիւն են ստացել։

Հայ ժողովրդի այն մասը, որ գտնվում է լեռնային շրջանում, դեռ փոքր ի շատէ սեփական այժ և ապահովութիւն ունի, թէև այն էլ դեռ անբաւական կերպով։ Այդ տեղերում հայ ազգաբնակութիւնը ապրում է փոքր ի շատէ համախմբված և ունի դիրքեր, որոնք դժուարացնում են յարձակվողների շարժումները։ Սակայն էական դիմադրութիւն ցոյց տալու համար բաւական չեն բազմամարդութիւնը և դիրքերը, կարևոր են և պաշտպանութեան միջոցներ։ Եւ տխուր իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդ միջոցները հարուստ և առատ չեն գիւղացիների ձեռքում։

Իսկ այն տեղերում, ուր հայ ազգաբնակութիւնը սակաւաթիւ է, չունի աջող դիրքեր և շրջապատված է Թուրքական գիւղերով, այնտեղ վտանգ կայ, որ ամբողջ գիւղեր կը դառնան աւերակներ և մարդկանց տները մի շարք գերեզմաններ։

Սարսափելի է դրութիւնը։

Երբ որ մենք յամառ կերպով ասում ու պնդում էինք, թէ Գանձակի նահանգում լուրջ պատրաստութիւններ են տեսնվում յարձակումներ գործելու, մեզ ասում էին թէ մենք չափազանցնում ենք իրերի դրութիւնը։ Երբ հայ գիւղացիները նահանգի գանազան կողմերից գալով Թիֆլիս, հաղորդում էին Թուրքերի կապածելի արարքների անվերջ փաստեր, զինական զորձորները միայն մի պատասխան էին տալիս բոլորին, մի բազուկ կարող, մի պապանձեցնող պատասխան.

—Հարկաւոր միջոցները ձեռք են առնված, ամեն տեղ բաւականաչափ զօրք կայ յուսմունքները խեղդելու համար և վարչական անձերին տրված են անհրաժեշտ հրամանները։ Հանդիստ եղէք։

Մենք այնքան սովոր ենք այդ պատասխանին, այնքան անգամ ենք լսել, որ վաղուց մենք ոչ մի նշանակութիւն չենք տալիս նրան։ Եւ մեզ միայն մի բան է զարմացնում, թէ մինչ այն, ինչ որ օր ցերեկվայ լոյսի նման պարզ, աշկարայ և ակնյայտ էր բոլոր հայերի համար, ինչու յայտնի չէր լինում վարչական անձերին։ Մինչ հրոսակխմբերի կազմվելը, նրանց եռանդուն բանակցութիւնները, որոնց մասին ամբողջ աշխարհը գիտէր, նոյն իսկ Պետերբուրգի 1 գուցէ Պարիզի մամուլը, միայն ծածկված և վարագուրված էին տեղական վարիչների համար։

Սա է սոսկալին, սա է անմտանելին։

Երբ որ մենք հայերս ասում էինք, թէ Գանձակի նահանգի հրաբուղխի վրա է կանգնած, գեներալ-նահանգապետ Տակայշվիլին մեզագրում էր մեզ բոլորիս, ասելով որ մենք ծանօթ չենք նահանգի դրութեան հետ և որ նա կարողացել է ամեն բան կարգադրել, բոլորին հաշտեցնել և ամեն տեղ տիրում է խաղաղութիւն։

Այսօր, այս կրիտիկական օրերում պէտք է տեսնվէր, թէ ինչ է արված կարգ ու խաղաղութիւն պահպանելու համար։ Սկսվել է մի հարցաքննութիւն, բայց սոսկալի և տխուր հարցաքննութիւն։

Դեռ մինչ երէկ չէր, որ վարչական խոշոր ու փոքր մեծաւորների մի ամբողջ լեգէոն ամեն տեսակ արգար ու անարդար միջոցներով աշխատում էր հեռացնել Ղազախի գաւառի կառավարիչ Աբնօլդին։ Մի մարդու, որի ձեռքի տակ գտնվող գաւառը միակն էր, որ բացառութիւն էր կազմում Գանձակի նահանգի լեռնային շրջանում։

Մենք այստեղ այս ծանր բօպէին չէինք մասնաւորացնի հարցը և խօսել մի գաւառապետի մասին, բայց նա ոչ միայն լուսաբանութիւն է իրերի բնաւորութեան վերաբերութեամբ, այլ և մեծ կապ ունի Գանձակի նահանգի կոտորածներ սարքողների ծրագրի հետ։ Աբնօլդի գաւառապետ լինելը խանգարում էր Ղազախի գաւառն էլ մտցնելու Թուրքական շարժման շրջանի մէջ։ Այդ պատճառով ամենամեծ ջանքեր էին անվում նրան հեռացնելու։ Եւ հէնց որ կարելի եղաւ հեռացնել նրան, իսկոյն ընդհանուր շարժման կոչնակը հնչեց։ Սակայն անապատելի կերպով նորից վերադարձաւ Աբնօլդը Ղազախ և յոյս կայ, որ նա հնարաւորութիւն ունենայ դեռ պահել Ղազախը շարժումից, եթէ արդէն ուշ չէ։

Գանձակի աղէաի բռնկվելը և նրա յանկարծուստ մեծ ծաւալ ստանալը շատ փայլուն ապացոյց է թէ ինչ պատրաստութիւններ են տեսնված եղել շաբաթների և ամիսների ընթացքում։ Եւ ով ցանկանար նրանց տեսնելու, անշուշտ կը տեսնէր և դժբաղդութիւնների առաջն կառնէր։

Բայց չը ցանկացան տեսնել և դժոխքը մեր առաջ է։

Ահա ինչն է սոսկալի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջ ենք բերում մի շարք հեռագիրներ, որոնք ստացվել են Թիֆլիսում թէ մեր խմբագրատանը և թէ զանազան հասատութիւններում։

Գանձակ գնացած Կովկասեան Փոխարքայի օգնական գեներալ Մալաման հեռագրում է Փոխարքային հետևեալը.

Գանձակ, 20 նոյեմբերի, երեկոյեան ժամը 9 և 30 րօպէին։

«Հասայ Գանձակի կայարանը նոյեմբ. 20-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Ուշ ժամանակի, կառապանների բացակայութեան պատճառով, քաղաք կը գնամ 21-ին առաւօտեան շուտ։ Կանչված ոստիկանապետը յայտնեց, որ քաղաքը հանդարտ է. այրվելու վերջանալու վրա են Թուրքական տները քաղաքի հայկական մասում։ Թշնամացած կողմերը բանակցութիւններից յետոյ որոշել են փոխանակել դիակները, դադարեցնել թշնամութիւնը, բայց զինաւորված Թուրք և հայ գիւղացիները դիշերում են քաղաքում։ Դրագուններին, որոնք կը հանեն այս գիշեր, կուղարկեմ առաւօտեան 21-ին։ Կայարաններում-Թաուզից սկսած ծառայողները ապրում են մեծ վախի մէջ, թէև դէրբենդեան գնդի կօմանդաներ կան։ Հանգստացրի, մի քանի կայարաններում պարաւորեցրի մերձակայ գիւղերի տանուտէրներին հսկել կարգի վրա։ Այս րօպէին հասան դէրբենդցիների երկու վաշտը Եւլախից, Հաջիկարաւլից և կը գնան քաղաք։ Չէրնօմօրեան գնդի առաջին հարիւրեակը, որ գնում էր Զալալ-օղլի, ես պահեցի կայարանում։ Վաղը, երբ զորձերի դրութիւնը կը որոշեմ, կը վճռեմ ինչ անել այդ հարիւրեակը, Գանձակ կայարանը նոյնպէս երկիղի մէջ է. բայց զօրքի գալը հանդարտացրեց։

Գեներալ-լեյտենանտ Մալամա

Գանձակից ստացված է նոյեմբերի 19-ին, գիշերը, հետևեալ պաշտօնական հեռագիրը։

Նոյեմբերի 18-ին, առաւօտեան ժամը 10-ի մօտ, սկսվեց հրաձգութիւն հայերի և Թուրքերի մէջ։ Զը նայելով սաստիկ հրաձգութեան երկու կողմից ևս, սպանվածներ, համեմատաբար, քիչ կար—մօտ 30 հոգի, մեծ մասը—հայ առևտրականներ։ Կան և վիրաւորներ։ Միաժամանակ սկսվեցին հայոց խանութների հրդեհները քաղաքի Թուրքական մասում և բանակիչները՝ սարսափահար փախչել սկսեցին։ Ընդհարումը սպառնում էր դարնալ սոսկալի կոտորած, բայց նրա առաջն առնվեց բօմիսոր Խուցիէվի նախաձեռնութեամբ բերված տեղական քաջարէյով, որ գասաւորվեց քաղաքի զանազան մասերում։ Ոստիկանութիւնը չէր գործում, որովհետև փողոցներում տեղի էր ունենում սաստկացած հրաձգութիւն զալսերով։ Ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետ գեներալ Տակայշվիլին նոյնպէս, մինչև այն րօպէն, երբ նրա մօտ եկաւ բօմիսոր Խուցիէվը չորս թնդանօթներով, կապիտան Բուբինոյ հրամանատարութեամբ, ցերեկվայ ժամը 12-ին, ամենևին դուրս չեկաւ իր բնակարանից, իսկ շատ յետոյ, երևալով քաղաքում, չը ձեռնարկեց եռանդուն միջոցների՝ անկարգութիւնները ճնշելու համար, որից յետոյ յետագայ ընդհարումների և կոտորածի առաջն առնելու գործը իրանց վրա առան գեներալ Ֆլեյշէրը և բօմիսոր Խուցիէվը։ Սրանց սկսեցին դիմել քաղաքացիները օգնութեան համար։ Սրանց ձեռք առած միջոցներով կօզակների օգնութեամբ Թուրքական մասում ներքնատներում, ամերում, խանութներում և հիւրանոցներում ողջ մնացած բոլոր հայերը ուղարկվեցին զօրքի պատսպարման ներքոյ քաղաքի հայկական մասը, իսկ քաղաքում երևցած Թուրքերը շրջակայ գիւղերից—իրանց գիւղերը։ Իրրև առիթ այդ դէպքերի, որոնք տեղի ունեցան վաղուց արդէն հայերի և Թուրքերի մէջ արված յարաբերութիւնների հողի վրա, ծառայեց Թագանրաց գիւղի 3 Թուրքերի սպանութիւնը, որոնց դիակները գտնվել էին նոյեմբերի 18-ին առաւօտեան, քաղաքից դուրս, քաղաքի և Երևենդօրֆ կօլոնիայի էչՍ ճանապարհի վրա։ Այս րօպէին (18 նոյեմբերի) հրդեհը սաստկանում է։ Այրվել, վերջացել է խանութների և մագազինների գրեթէ մի ամբողջ թաղ։ Հրդեհը կարող է անցնել և քաղաքի կենտրօնի բնակվածներին։ Հրնարաւորութիւն չը կայ կանգնեցնել հայոց խանութների հրդեհը և կողոպուտը Թուրքերի և հետևակ զօրքի ստորին զինուորների ձեռքով, որովհետև մի կողմից քաղաքում միայն երկու հատ հրդեհաշէջ ջրհան կայ, միւս կողմից—զօրքի պահապանութեան պատճառով կարգի վերականգնումը այժմ արդէն դժուար է և, հաւանօրէն, նոյեմբերի 18-ին սկսված ընդհարումները կը շարունակվեն, ի նկատի ունենալով, որ կարող են շրջակայ գիւղերից զինաւորված Թուրքեր և հայեր գալ։

Զիվանշիրի և Զիբբայիլի գաւառներում գեներալ Տակայշվիլին նոյնպէս ոչ մի բանի չէ ձեռնարկել և շուտով այդտեղ ևս կարող են կրկնվել դէպքեր սոսկալի ծաւալով։

Գանձակից, նոյեմբերի 20-ից ցերեկվայ 12 ժամ 30 րօպէին հեռագրում են մեզ. «Մեր կրած սարսափները գերազանցում են այն բոլորը, ինչ պատահեց Կովկասում այս տարի։ Քաղաքը շրջապատված է 10,000 զինված Թուրքերով։ Հայ ազգաբնակութիւնն սպառնում է կատարեալ ջնջումն։ Բաղարը ամբողջովին կողոպտված և այրված է։ Հայերի կորուստները հասնում են երեք միլիոնի։ Ցարձակումը տեղի ունեցաւ ուրբաթ օր առաւօտեան Թուրքերի կողմից միաժամանակ քաղաքի զանազան մասերում, բայց առանձնապէս նենգաւոր և կատաղի էր յարձակումը բազարում։ Ցարձակումը տեղի ունեցաւ անակնկալ. հայերը յանկարծակի եկան։ Կան շատ սպանվածներ և վիրաւորներ։ Հարկաւոր է անյապաղ օգնութիւն զօրքերով։ Քաղաքում քիչ են զօրքերը։ Օգնեցէք»։

Գանձակ, նոյեմբերի 20-ին, առաւօտեան 11 ժամ 8 րօպէին. «Ուրբաթ, նոյեմբերի 18-ին, առաւօտեան ժամը 10-ին, երբ հայերը գտնվում էին Թուրքական մասի իրանց խանութներում, զինաւորված Թուրքերը յանկարծ յարձակվեցին և սկսեցին կոտորել ու կողոպտել խանութները, որից յետոյ այրեցին ամբողջ շուկան։ Սպանվածների թիւը դեռ ևս յայտնի չէ, յամենայն դէպս ոչ-պակաս 80—100-ից։ Դիակները հաւաքված չեն, որովհետև անկարելի է անցնել դէպի շուկան։ Ճանապարհը դէպի կայարանը փակել են Թուրքերը։ Հայոց թաղը պաշարված է մերձակայ գիւղերից եկած զինաւորված Թուրքերով։ Կորուստները միլիօնների են հասնում։ Հարկաւոր է անյապաղ օգնութիւն»։

Կորիւն վարդապետ

Գանձակից, նոյեմբերի 19-ին, գիշերվայ ժամը 11-ին հեռագրում են. «Առայժմ երեկոյեան մօտ Թուրքերի խուժումն սաստկանում է։ Կայարանում բօպէ առ բօպէ սպասում են Թուրքերի յարձակման։ Կէս քաղաքը այրվեց։ Զեգամում կոտորած սկսվեց։ Ալաբաշլում անկարգութիւններ և զոհեր կային։ Կայարանի ծառայողները կազմակերպում են մի զինաւորված խումբ, որը կանգնած է շրթայանձև. խնդրում են զէնք հայթայթել։ Կայարանի մօտ կայ բազար, բայց հայերը թողեցին բնակարանները, ապաստանվեցին ծառայողների մօտ։ Քաղաքում սպանված են մինչև 300 մարդ, բայց խճուղու վրա, կայարանից մինչև քաղաք, մօտ 40 մարդ սպանված ընկած են և բազմաթիւ վիրաւորներ այրվածներ կան։ Որ և է հաղորդակցութիւն քաղաքի հետ ընդհատված է։ Առաւօտեան 7 ժամին սկսվեց սաստիկ հրացանաձգութիւն. արձակվեցին թնդանօթի ութ ռումբեր։ Զօրքեր գրված են Թուրքական և հայկական մասերի մէջերը»։

Գանձակ կայարան, նոյեմբերի 20-ին, առաւօտեան 10 ժամ 15 բօպէին. Գանձակի կայարանում խաղաղ է։ Քաղաքում կոտորածը դադարել է։ Մանրամասնութիւնները կը հաղորդենք։ Կօկչաեվ, Զբէլաեվ, Խատիսով։

Գանձակ կայարան, 20 նոյեմբերի։ Երկրորդ օրն է, որ քաղաքն այրվում է։ Տեղի ունի անընդհատ հրացանաձգութիւն։ Այրվում են հայերի բոլոր խանութները և մեծ քանակութեամբ Թուրքերի տները։ Զոհերի թիւը յայտնի չէ։ Կայարանը պաշտպանում են կամաւորներ հայերից, վրացիներից և ռուսներից։ Զաղալի կայարանում այրվում են Արաֆելովի և Կօրգանովի կալուածները։ Երէկ երկու անգամ զինուորները և կամաւորները յետ մղեցին Թուրքերի գործած յարձակումը կայարանի վրա։ Խնդրում ենք օգնութիւն։

Ամիրով

Եւլախ, 21 նոյեմբերի.

Եւլախ կայարանը գտնվում է զինուորական դրութեան մէջ. ապրանքների պահեստը մօտ 300 Թուրքերի կողմից յարձակման ենթարկվեց։ Կայարանապետը նոյնպէս շրջապատված է Թուրքերով և չէ կարողանում դուրս գալ։

Կայարանապետի դրասենեակն են ապաստանել կայարանի բոլոր բանւորները. իմանալով այդ Թուրքերը սպառնում են յարձակվել կայարանի վրա։ Խնդրվում է շուտով օգնութիւն զօրքով. ապրանքների պահեստը բոլորովին կողոպտված է, հրացանաձգութիւնը շարունակվում է և իւրաքանչիւր րօպէ սպասում ենք կայարանի վրա յարձակման։

Եւլախ, 21 նոյեմբերի.

Նոյեմբերի 20 լոյս 21-ի գիշերը Թուրքերը մօտ 300 հոգի յարձակվեցին կայարանի վրա և գիշերվայ ժամը 6 և 50 րոպէին սկսվելով անընդհատ հրացանաձգութիւնը՝ տևեց մինչև ժամը 1 և 10 րոպէ. Ջարդված է ապրանքապահեստը, որտեղից փուրջօնեերով տարված են շատ արժէքաւոր ապրանքներ. կողոպտված ապրանքի արժէքը դեռ պարզված չէ, բայց ենթադրվում է, որ վնասն անպէտ է։

Աւազակները հեռանալիս այրեցին ապրանքապահեստի մնացած ապրանքները, սակայն կայարանում մնացող բանւորներին աջողվեց շուտով հանգցնել կրակը։

Ադստաֆա, 21 նոյեմբերի.

Կովկասեան ոստիկանութեան գլխաւորին։

Թաուզ կայարանում կողոպտված է երկու խանութ Թուրքերի ձեռքով. սպանված են երկու պահապան զինուորներ. Թուրքերին ղեկավարում է յայտնի Մահմէդ Իսկանդար-բէկովի եղբայրը։

Թաուզի մօտիկ գտնվող փոքրիկ հայ գիւղը, Կիրգան, կողոպտման և աւերման ենթարկվեց Թուրքերից. աւերածութիւնից ու կողոպուտից ազատ մնաց Թուրքական Մահարլի գիւղը։

Ալէքսանդրօպոլ, 20 նոյեմբերի
Կովկասեան Փոխարքային և Վեհափառ Կաթողիկոսին։

Տեղական հասարակութիւնը, ժողովված Գանձակի դէպքերի առիթով, որոշեց անմիջապէս դադարեցնել Գանձակի կոտորածը, վերջ դնել կազմակերպված հայկական կոտորածին, որ կատարվում է Թուրքերի և խուլիգանների ձեռքով, վերացնել զինուորական դրութիւնը և անմիջապէս հեռացնել գեներալ-նահանգապետ Տակայշվիլին և Եացկովիչին, վերացնել բոլոր արգելարգելները, որոնք խանգարում են հայերի զինման և թոյլատրել ժողովրդական միլիցիայի կազմակերպութիւն ռուս օֆիցերների ղեկավարութեան տակ ինքնապաշտպանութեան համար, արձակել պահեստի մէջ գտնվող հայ զինուորներին, որպէս զի նրանք կարող լինեն օգնութեան հասնել իրանց ազգական ընտանիքներին։

Ցաղոզ Կիւրեղ վարդապետ
Քաղաքագլուխ Տէր-Պետրոսեան

Ալէքսանդրօպոլ, 21 նոյեմբերի
Վեհափառ Կաթողիկոսին։

Ալէքսանդրօպոլի հասարակութիւնը և Գանձակի նահանգի այն հայ զինուորները, որոնք վերջացրել են իրանց ծառայութեան ժամանակամիջոցը, խնդրում են Ձերդ Սրբութիւնից Ձեր հեղինակաւոր գործակցութիւնը՝ կառոյց ածելու մեր որոշումները։ Իսկ զինուորները առանձնապէս խնդրում են ազատել իրանց և կազմել առանձին վաշտ իրանց օֆիցերների ղեկավարութեամբ և ուղարկել Գանձակի դաւառը կարգը վերահաստատելու համար։

Ցաղոզ Կիւրեղ վարդապետ
Քաղաքագլուխ Տէր-Պետրոսեանց

Թիֆլիսում ստացվել է հետևեալ հեռագիրը գեներալ Մալամայից։

Գանձակ, 21 նոյեմբերի, երեկ. 4 ժ. 48 ր.

«Առաւօտեան ժամը 8-ից շրջեցի քաղաքը։ Զը նայելով, որ երէկ խոստացան կարգը պահպանել, այրեցին մի տուն և հրաձգութիւն կատարվեց։ 2 զինուոր թեթև վիրաւորված են։

Զինուորների ուղեկցութեամբ Թուրքական մասից հայերի ման ենք տեղափոխում հայերին և նրանց ստացվածքը։

Խօսեցի հայերի և Թուրքերի հետ։ Վերջնական բանակցութիւնները կը կատարենք նոյեմբերի 22-ին։

Հաջի-Կաբուլից եկած մի վաշտ զօրքն ուղարկում եմ քաղաք։ Զերնօմօրեան հարիւրեակը թողնում եմ կայարանում։

Քաղաքում առաւօտեան ժամը 11-ից խաղաղ է։

—

Քաղաքային Դումայի կողմից Գանձակ գնացած ձայնաւորներ՝ Կեօքչայէվ, Զրեւայէվ և Խատիսեան հետևեալ հեռագիրն են ուղարկել քաղաքագլխի պաշտօնակատարին, նոյեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 9 և 35 րօպէին։

«Մեր մուտքը քաղաք, վտանգի պատճառով, պահպանում էր ոստիկանատեսը 30 օգակների ուղեկցութեամբ։ Ճանապարհում մնացին մօտ 300 անդորներ, որոնք սպասում էին պահպանութեան՝ քաղաք գնալու համար։ Վօկզալը պաշտպանվում է մի քանի զինուորներով և լաւ կազմակերպված ինքնապաշտպանութեան խմբով։ Այդ ինքնապաշտպանութեան խմբի գործունէութիւնը շատ գնահատելի է խաղաղ ժողովրդի համար։ Գնացինք քաղաք։ Փողոցները լի են հրացան բռնած մարդկանցով։ Կիրակի գիշերը, այսօր առաւօտեան—հանգստութիւն է։ Քաղաքի մի մասի բնակչութիւնը չէ գնում միւս մասը։ Հաղորդակցութիւնը փոկզալի հետ պահակամբով է կատարվում։ Առայժմ զինաւորված խաղաղութիւն է։

Զը նայելով ազգամիջութեան երկու մասերի խնդիրքին, որոնք առաջարկում էին ապահով բնակարաններ, մենք իջանք «ԿեՏՏրօնական հիւրանոցում», որ համարվում է չէզոք դիրք։ Անհագին հիւրանոցը բոլորովին դատարկ է։ Ուղեորներին պատսպարեցին Ապշերոնի բատալիօնի կայարաններում, որ շատ մարդիկ է փրկել։ Ազատվածների մի մասը դեռ գտնվում է զօրանոցներում։ Ազատութեան գործին օգնում մ էին օֆիցերները. մանաւանդ գեներալ Ֆլեյշերը։ Կան բազմաթիւ դէպքեր հայերի փրկութեան Թուրքերի ձեռքով և Թուրքերի հայերի ձեռքով։ Այլված են վեց մեծ տներ, մինչև 60 խանութներ։ Կողոպտումը՝ հսկայական է։ Կողոպտողների և և մարդասպանների վրա գնդակ չէին արձակում և դա խրախուսում էր նրանց։ Երէկ մեր մանակցութեամբ կայացաւ նիստ պատուաւոր անձերից և հոգևորականութիւնից հաշտութեան պայմանները մշակելու համար։ Կայացաւ հաշտութիւն այն պայմանով, որ դադարեցնեն հրաձգութիւնը, յանձնեն դիակները, կենդանի բռնվածներին և սպանվածներին և ապահովեն քաղաքի երկու մասերի և փոկզալի հաղորդակցութիւնը։ Ընտրված է խառն յանձնաժողով դիակները ժողովելու համար երկու մասերի փողոցներից, որոնք 3 օր ընկած էին չը հաւաքված։ Քաղաքացիները հնարկալութիւն յայտնեցին Թիֆլիսին կարեկցութեան համար։ Տեղական իշխանութիւնները գանգատվում են զօրքերի պակասութեան, գաւառական վարչութեան անգործունէութեան և նահանգական իշխանութեան բացակայութեան մասին։ Հրդեհը վերջացաւ։ Թափօրը առայժմ անժամանակ է համարվում։ Երկու կողմերը այսօր հաւաքվում են իրանց աղօթատներում։ Ընկած զոհերի առաջիկայ թաղումը—թիւը ճիշդ որոշված չէ—մինչև 90 հոգի է։ Երէկ, փողոցներում կանգնած էին բացառապէս զինաւորված մարդիկ։ Այսօր նկատվում է մի փոքր կենդանութիւն։ Ժողովրդի կարիքների մասին յետոյ կը հաղորդենք։

Այս հեռագիրը կազմելիս երևաց հրդեհի բոց ընդհանուր-նահանգապետի տան մօտ։ Քաղաքի զանազան մասերում հրաձգութիւններ թնդացին։ Նրանց պատճառը յայտնի չէ»։

—

Զեգամ կայարանի դրասենեկապետը հեռաձայն է զեկուցել Անդրկովկասեան երկաթուղու կառավարչին. «Կաղ առաւօտեան, նոյեմբերի 18-ին, Զեգամ կայարանում լուր տարածվեց, թէ շրջակա ներում սկսվել են հայկական ջարդեր և այդ լուրերը կատարելապէս հաստատվեցին, երբ լսեցին հեռուից հրացանաձգութիւններ։ Առաւօտեան մօտ 11 ժամին, կէրօսինեան կայարանի մօտ գտնվող (կոռ կոռ է արված) ագադ բանւոր Մարտիրոսովի կինը և վիրաւորված են նրա անմեղ մանկահասակ երեխաները. նա ինքն մի հրաշքով ազատվեց և ապրանքատար գնացքով բերվեց Զեգամ կայարանը, իսկ այդտեղից երեխաներով բերվեց Ադստաֆա կայարանը։ Կերօսինայի կայարանում ևս Թուրքերը սրտնում էին հայերին, բայց ծառայողների ջանքերի շնորհիւ, այդ նրան չաջողվեց, և կայարանում եղած միակ հայը, ագադ փականագործ Թայիրով իր կնոջ և երկու մանր երեխաներով տարվեց Թիֆլիս։ Հին-Զեգամում Թուրքերը սրի անցրին բոլոր հայերին, իսկ երեկոյեան կարելի էր տեսնել այդ գիւղի անպաշտպան հայերի այրվող բնակարանների ցոլքը։ Փորձ եղաւ Զեգամի հաշտարար դատարանին կից բանտը հրդեհել, բայց, փառք Աստուծու, Թուրք չարագործները իր ժամանակին նկատվեցին և նրանց դիտաւորութիւնները ի դերև ելան, այնպէս որ հրացանաձգութիւն եղաւ, սրի ժամանակ, ինչպէս ասում են, սպանվեցին չորս Թուրքեր. գիշերը սպասում էին յարձակման հէնց իրան Զեգամի վրա։ Հայերը և առհասարակ այդ շրջանի բոլոր բնակիչները կատարելապէս անպաշտպան դրութեան մէջ են Թուրքերի վայրենի կամայականութիւնից և մենք կարծում ենք, վաղուց արդէն ժամանակ է միջոցներ ձեռք առնել նրանց զսպելու համար։ Զեգամ կայարանի երկաթուղին պաշտպանելու համար նոյեմբերի 19-ին ընդամենը կային 32 զինուոր, որը, ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ շրջակաները շրջապատված են ֆանատիկների գիւղերով, չափազանց անբաւարար է։ Բաւական չէ արդեօք ապրինը։ Կարծեմ ժամանակ է յիշելու, որ բոլոր մարդիկ եղբայրներ են, և տալ անպաշտպան հայերին կամ պաշտպանութիւն կամ երաշխաւորութիւն անմիտ մարդկանց, անգրագէտ ամբոխի վայրենի կամայականութիւնից, որոնք յայտնի չէ ում ճնշման տակ չը գիտեն թէ ինչ են անում։ Ռուս։»

—

Նոյեմբերի 21-ին Բաղուից եկաւ միայն մի գնացք։ Գնացքը պէտք է հասնէր առաւօտեան ժամը 7-ին, բայց գծի վրա եղած անկարգութիւնների պատճառով հասաւ միայն ժամը 1½-ին կիսօրեայ յետաձգմամբ, որովհետև Եւլախ և Գանձակ կայարանում երկար մնացել էր։ Այդ գնացքի օբէր-կօնդուկտորի խօսքով, Եւլախ կայարանը ենթարկվել է Թուրքերի յարձակման. սպանված են 8 բանւոր, մնացած հայ ծառայողները ազատվեցին ռուս ծառայողների օգնութեամբ։ Ապրանքի կայարանը և կայարանին կից հայերի ամբարները կողոպտված են։ Գնացքից երևում էր ինչպէս 20—25 փուրջոնեերով ասնում էին Աղդամի տարկոի վրա կողոպտված ապրանքը։ Բոլոր կայարաններից ծառայողները փախել են։ Զաղալի կայարանը այրվում է։ Գիշերը յարձակումն եղաւ Ադստաֆայի կայարանի վրա, բայց յարձակումը յետ մղվեց զինուորների ձեռքով։

—

Գանձակի շրջանում գտնվող Դալլար կայարանի մօտ Անենիֆելդ գերմանական գաղութում հաստատված հայ գիւղացիները ամբողջապէս կողոպտված և թալանված լինելով Թուրքերի կողմից, խումբով եկել էին Թիֆլիս, ներկայանալու Փոխարքային և գանգատվելու իրանց դէմ գործ դրված բարբարոսութիւնների համար։ Ցիշեալ հայ գիւղացիների պատգամաւորութիւնը երկուշաբթի օրը ցանկացաւ ներկայանալ Փոխարքային, բայց Փոխարքան յայտնեց, որ գրաւոր ներկայացնեն իրանց գանգատները ու պահանջները։ Երէկ նոյն պատգամաւորութիւնը ներկայացաւ Փոխարքային գրաւոր պահանջներով և խնդրեց, որ լսէ նրանց և բերանացի։ Փոխարքան խոստացաւ նրանց լսել և յայտնեց, որ կը նշանակէ ընդունելութեան ժամանակը։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԻԱՑԵԱԼ ԺՈՂՈՎԸ

Երկուշաբթի օր, նոյեմբերի 21-ի երեկոյեան, Թիֆլիսի քաղաքային վարչութեան դանլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի հայերի և Թուրքերի խորհրդակցութիւն քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Զերբեգովի նախագահութեամբ։

Թուրքերը եկել էին յայտնելու, որ նրանք իրանց կողմից ոչ մի յարձակողական փորձ չեն անի հայերի դէմ։ Հայերն էլ յայտնեցին, որ նրանք երբէք նախայարձակ չեն եղել և չեն լինի։

Երկար բացատրութիւններից յետոյ խորհրդակցութիւնը որոշեց ընտրել երկու ազգերի ներկայացուցիչներից մի բիւրօ, որ քննէ ամեն մի թիւրիմացութիւն, որ կը ծագէ հայերի և Թուրքերի մէջ։

Հաւանական է, որ Թիֆլիսը ազատ մնայ այն արհաւիրքից, որ այցելեց մեր երկրի զանազան մասերը։

ԳԱՆՁԱԿԻ ԴԷՊՔԵՐԸ

(Նախապատմութիւն։ Կայարանում։ Քաղաքում։)

Նախապատմութիւն։ Գանձակի արիւնալի և դաւաճանական դրամն սկսվեց նոյեմբերի 18-ին առաւօտեան ժամը 11-ի մօտերը։ Թուրքերը դուրս եկան մզկիթից աղօթքներով ու երդերով և յարձակվեցին մզկիթի շուրջը գտնվող հայերի խանութների վրա, խուժեցին ծածկված բազարի զանից ներս։

Սկսվեց կոտորածը։

Թուրքերը և նրանց գործիք ու մտերիմ գեներալ Տակայշվիլին, հռչակաւոր Թուրք ոստիկանապետը, ամբողջ Թուրք ոստիկանութիւնը աքսում են արացուցանել, որ քաղաքից դուրս հայերը յարձակվել են 4 Թուրքի վրա, սպանել 3-ին, իսկ չորրորդը, երբ Թէ վիրաւորված, արիւնաւոյ, ազատվել և հասել է քաղաք նոյեմբերի 18-ին, մտել մզկիթ, աղօթողներին պատմել ու ողբացել, որ հայերը կոտորում են թուրքերին։ Թուրքերն էլ իրը թէ որ հրացանաձգութիւն եղաւ, սրի ժամանակ, ինչպէս ասում են, սպանվեցին չորս Թուրքեր. գիշերը սպասում էին յարձակման հէնց իրան Զեգամի վրա։ Հայերը և առհասարակ այդ շրջանի բոլոր բնակիչները կատարելապէս անպաշտպան դրութեան մէջ են Թուրքերի վայրենի կամայականութիւնից և մենք կարծում ենք, վաղուց արդէն ժամանակ է միջոցներ ձեռք առնել նրանց զսպելու համար։ Զեգամ կայարանի երկաթուղին պաշտպանելու համար նոյեմբերի 19-ին ընդամենը կային 32 զինուոր, որը, ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ շրջակաները շրջապատված են ֆանատիկների գիւղերով, չափազանց անբաւարար է։ Բաւական չէ արդեօք ապրինը։ Կարծեմ ժամանակ է յիշելու, որ բոլոր մարդիկ եղբայրներ են, և տալ անպաշտպան հայերին կամ պաշտպանութիւն կամ երաշխաւորութիւն անմիտ մարդկանց, անգրագէտ ամբոխի վայրենի կամայականութիւնից, որոնք յայտնի չէ ում ճնշման տակ չը գիտեն թէ ինչ են անում։ Ռուս։»

—

Նոյեմբերի 21-ին Բաղուից եկաւ միայն մի գնացք։ Գնացքը պէտք է հասնէր առաւօտեան ժամը 7-ին, բայց գծի վրա եղած անկարգութիւնների պատճառով հասաւ միայն ժամը 1½-ին կիսօրեայ յետաձգմամբ, որովհետև Եւլախ և Գանձակ կայարանում երկար մնացել էր։ Այդ գնացքի օբէր-կօնդուկտորի խօսքով, Եւլախ կայարանը ենթարկվել է Թուրքերի յարձակման. սպանված են 8 բանւոր, մնացած հայ ծառայողները ազատվեցին ռուս ծառայողների օգնութեամբ։ Ապրանքի կայարանը և կայարանին կից հայերի ամբարները կողոպտված են։ Գնացքից երևում էր ինչպէս 20—25 փուրջոնեերով տանում էին Աղդամի տարկոի վրա կող

յուզվել և զուրս են թափվել մզկիթից, կոտորել հայերին։

Ահա այն պաշտօնական տեսակէտը, այն անմեղութ դիմակը, որով ուզում են այժմ դիմակաւորել Գանձակի կոտորածի արիւնոտ իսկութիւնը։ Այդ երեխայական թեթեւամտութիւնով ուզում են ծածկել ակնայանի պրովոկացիայի, լարված մեքենայութեան հրեշաւոր գործը։

Մեր ընթերցողները երևի յիշում են, որ «Մշակի» վերջին համարներից մէկում Գանձակի մեր թղթակից Ս. Տէր Աւետիքեանը նախազուշակել էր, որ մի վատ պրովոկացիա, մի մեքենայութիւն է լարված հայերի դէմ թուրքերի և ռուսիանութեան կողմից։

Դրանից աւելին դեռ կայ։ Գանձակի կիրսինմուզ կայարանի գլխաւոր ինժենէրը վկայում է (նա պատրաստ է վկայելու և դատարանի առաջ), որ չորեքշաբթի և հինգշաբթի օրերը, կոտորածի նախընթաց երեկոյեան, գնացքով բազմաթիւ բէկեր ու ազատներ, գիւղացիներ ու քաղաքացիներ հաւաքվում էին Գանձակի բոլոր շրջակայքից, սկսած Եւլախից ու Մուղանի դաշտի միւս մասերից, Զագամից ու նոյն իսկ Ղազախից։

Մի ուրիշ փայլուն փաստ ևս միախնդրերն են։ Հինգշաբթի առաւօտեան միանգամ է լինում նշանակված։ Հաւաքվում է անագին բազմութիւն—հայեր, թուրքեր, ռուսներ։ Այդտեղ խօսում են ազգերի, գրացիների հարաբերութեան մասին. այդտեղ կոչ են անում բոլոր աշխատաւորներին միանալու, մի օրեղ ու համերաշխ ընակ կազմելու։

Ամեն ինչ լաւ է անցնում։ Թուրքերը ևս ոգևորվում, ծափահարում, երգվում են բարի դրացի մնալ, համերաշխ ապրել հայերի հետ—Մի խոնդ է նշանակում նաև ուրբաթ սև օրվայ առաւօտ։ Հայ, ռուս, վրացի հաւաքվում են ժամը 9-ին։ Հաղիւ մի 110—200 մարդ հաւաքված են լինում, ժամը 10-ի մօտերը գալիս է ոստիկանապետը և խնդրում, որ ցրուեն, որովհետև կոտրած կարող է լինելու։

Ուրեմն՝ ամեն ինչ պարզ է. թուրքերն ուներն կանխամտածված մի ծրագիր, նրանք նախօրօք ուժեր էին հաւաքում քաղաք յարձակում գործելու, կոտորելու և կողոպտելու։ Ոստիկանութիւնն այդ գիտէր. գենէրալ-նահանգապետ Տակայշվիլին, մեր օրերի այդ գաճճ Նէրօնը 4 օր է Գանձակումն էր, նա ևս այդ գիտէր։ Կոտորածի առաջին օրը նա կռուած նստած, բեմերը ոլորելով, ժպիտը շրթունքներին, կազակներով շրջապատված շրջում էր քաղաքում կամ իր տան պատուհաններից զուրս նայում և Նէրօնի նման զուցէ Տրոյայի աւերումը ողբում։

Տակայշվիլին տեղեակ էր, իր աչքերով տեսնում էր կոտորածը, նրան զեկուցումներ էին տալիս, իսկ այդ զինուորական ոստիկանի հանձարը ներս էր մտնում տեսնելու, սրա նրա հետ երկար խորհրդակցում և ապա միայն դուրս գալիս, «այո» կամ «ոչ» ասում։

Մի բանում միայն նա չափազանց վճռական էր. դա հայ զինուորների ձեռքից զէնքը խլելն է։ Գանձակում գտնվող Ասլանդուզան և Շեմախեան գնդերում 120-ից աւելի հայ զինուորներ կան, մեծ մասը Երևանի նահանգից։ Թուրքերը գնացել են գեներալ Տակայշվիլու մօտ և խնդրել, որ հայ զինուորներին զինաթափ անէ։ Նա էլ արել է, առանց երկար կռնգ առնելու։

«Տակայշվիլին մեր մարդն է» ասում են թուրքերը. «մեր մարդն է», «մեր գեներալն է»։

—

Կայարանում։ Նոյեմբերի 21-ին քաղաքում կոտորածն սկսվելուն պէս, մի քանի հայեր մի կերպ փախել հասել էին կայարան։ Կայարանում եղածներն էլ մի քիչ զէնք ձեռք բերին և մօտ 40 հոգի հայ, վրացի և ռուս կազմեցին կայարանի պահակը։ Դրանք կամաւորներ էին։ Որտեղից որ է Բաքուի գնացքից պատահաբար կայարան իջաւ թէկ մի կարմիր, փոքրված, կռնա, կոտրած տեսած մի հայ կարճա—Թ. Ա.։ Վայը իջաւ, լսեց կոտրածի լուրը և տարօրէն նման ուզեց անցնել թուրքերով բռնված խճուղով, կորել 4—5 վերստ տեղ և գնալ այնտեղ, որտեղ վայրը, իր եղբայրներին օգնութեան։ Բայց կայարանում նրան պահեցին և նա դարձաւ կայարանի կամաւորների զեկավարներից մէկը։

Կայարանում կար միայն մի պահակ 16 զինուորից և մի պրապորշչիկից։ Իսկ այդքան հնչին ուժով անգային կայարանը պաշտպանել անկարելի էր, եթէ կարճա կամաւորները չը լինէին։ Կամաւորներից 30-ը հայ էին, իսկ մնացածները վրացի և ռուս։

Քաղաքից թուրք ձիաւորներ եկան դէպի կայարան, իսկ շրջակայ գիւղերից ամեն բոպէ մարդ ու խոշոր խմբերով թուրքեր շտապում էին դէպի քաղաք։ Կամաւորները տեսնում էին այդ ամենը, տեսնում էին թէ ինչպէս զարհուրած թուրք հրոսակները յարձակվում են Ցօրբերի այգում և մառուտակի գործարանի հայ բանուորների վրա, կոտորում, սպանում, կողոպտում—տեսնում էին, սրտերը մղկտում, առամները կրճատցնում, բայց օգնութեան չէին կարողանում հասնել, որովհետև եթէ կայարանից հեռանային, թուրքերը կարող էին ներս խուժել և բոլոր եղածներին սրի անցկացնել։

2—3 անգամ զինված թուրք խուժանը փորձեց յարձակվել կայարանի վրա, բայց ամեն անգամ մի քանի զոհ տալով յետ մղվեց։

Զօրքը մի անգամ կառաղի կրակ բաց արեց Զագամի կողմից դէպի քաղաք խուժող թուրք հրոսակների վրա, բաւական մարդ կոտորեց և ցրեց թուրքերին։

Հեռագիրները, որ Գանձակից և կայարանից ուղարկվում էին դէպի Թիֆլիս, բաւական խոշոր չափազանցութիւնների մէջ էին ընկնում։ Թուրք զինված խուժանը երբէք «սասնեցի հաղարների» չէր հասնում։ Թուրքերը շատացած էին մանր ու խոշոր խմբերով և գրեթէ քաղաք խուժողների թիւը հազիւ թէ 1000—1500-ից աւելի լինէր։

Առաջին օրը անցաւ։ Երկրորդ օրը երեկոյից սկսեցին երևալ և հայեր։ Նրանք շրջակայքից շատացած էին դէպի քաղաք, օգնելու իրանց եղբայրներին, ազգականներին։ Հաւաքվեցին այս ու այն կողմերից կայարան, դարձան մի փոքր խումբ և զէնքերը ձեռքերին պատուեցին, փակցրին վախտ ու ցածանոթ թուրք խուժանը և ներս մտան ուղղակի հայոց թաղը։

Ցաւոյ լսեցինք, որ միւս կողմի շրջակայքից, լեռնական գիւղերից էլ լսելով քաղաքին հասած դաւաճանական ազէսը, շտապել են բաւական կորիճներ։

—

Քաղաքում։ Ինչպէս ասացի, կոտրածն սկսվեց նոյեմբերի 18-ի առաւօտը, ժամը 11-ի մօտերը։ Մզկիթից դուրս խուժած զինված ամբոխը նախ գործ էր ածում սուր զէնքեր, խանչալ և դաշոյն, իսկ յետոյ արդէն տարբանակ, բերդան և մօսինի և մաուզեր։

Կոտրածն սկսեցին մզկիթի շուրջը եղած հայ խանութներից, յետոյ մտան ծածկված բաղարը, իսկ յետոյ դարձան դէպի հիւրանոցների փողոցը։ Մաքուր թալանեցին բոլոր հայ խանութները, լցրին փուրգոնների ու սայլերի վրա և սկսեցին կրել, տանել իրանց տները, Բաղմանլար թաղը և քաղաքից դուրս, դէպի Մուղանի դաշտի գիւղերը։

Կողոպտուեց յետոյ սկսվեց հրդեհը։ Բայց կրակը չէ ջոկում հային ու թուրքին—նա նրանց չէ Գանձակի ոստիկանութեան, ոչ էլ Տակայշվիլուն... Հայի խանութներից շատերը թուրքերի կալուածների մէջ են. մզկիթի շուրջը ամբողջ քառակուսին պատկանում է մզկիթին, դա «վակուֆ» է։ Եւ այդ բոլորն այրվել է։ Այրվել է նաև մզկիթի ներսի հիանալի պատը, որ նոյնպէս թուրքի է։

Այրվեցին «Ցենտրալնի» և «Գրանդ Օթէլ» հիւրանոցները (հայի), և «Եւրոպա» հիւրանոցի էկսից աւելին (թուրքի)։ Այրվում էր և Գոլիցէյսկի կոչված փողոցը, որ ամբողջապէս թուրքի տներ է պարունակում իր մէջ, բացի բաղարի ծայրի մի երկու խանութներից։

Երբ սարսափահար հայ խանութպանները, թողած իրանց բոլոր խանութները, մի մասը փախան մտան մօտակայ զօրանոցները, ռուսաց եկեղեցին և հայոց թաղը,—հայերն խլեցին զէնքերը ձեռքերին փողոց թափվեցին։

Երեսուներորդի մի սուար խումբ, լաւ զինված, ուզեց անցնել կամուրջով, շտապել բաղար օգնութեան, բայց զօրքը չը թողեց...

Ասլանդուզան գնդի Գարշիով անունով օֆիցէր մի ժանդարմի ասում է. «Թաք и нужно этимъ армянамъ»։ Նոյն հրշաւոր վարմունքն է ցոյց տալիս նոյն գնդի մի ուրիշ օֆիցէր էլ—Կուրլիցկին։ Այն ինչ հատարակ զինուորները, ամբիկ մարդիկ՝ նոյն իսկ արցունքն աչքերին գիտում էին զեն։ Տակայշվիլու հրամանի համաձայն իրանց բռնած քարարիրա դիրքը։

Զինուորն էլ մարդ է. նա իր աչքով տեսնում էր թէ ինչպէս անզէն խանութպանները կոտորում են գաղանացած թուրքերը, իսկ իրան չեն թողնում, որ իր «զինուորի պարքը» կատարէ, թողնեն, մեռնողին ազատ գազանների ճանկից։ Այժմ մտէք հայ զինուորների դրութիւնը... Նրանց վիրաւորել է գեներալ Տակայշվիլին թէ իրը մարդ, թէ իրը հայ և թէ իրը զինուոր։ Ամէն, զօրանոցում փակված... իսկ այնտեղ կոտորում են անզէն եղբայրներիդ։

Երկրորդ օրը թուրքական մասում եղած բոլոր հայերն արդէն հաւաքված էին հայերի թաղը։ Հայերի կրած վնասներն ու սպանութիւնները վերջացել էին։ Մնում էր մի երկիւղ. հայոց մասում եղած Մօլլա-Ձալա և Զայլու թուրքական թաղերից մշտական կրակ էին բաց անում հայերի վրա։ Այդ գեռ քիչ է. գրսից, դաշտավայրից եկած թուրքեր, ասում են նոյն իսկ Դաշի-Ալի աւազակական իր 500 ձիաւորներով, մտել էին այդ թաղերը և այդտեղից խոտով ու գարմանով ուզում էին կրակել հայոց թաղը, մի նոր Շուշի սարքել։

Հայերը զօրքն են խնդրում։ Տալիս են մի քանի զինուոր, որոնց ուղեկցում է մի հայ և ցոյց է տալիս այն թուրքի տունը, որտեղից, պատը ծակոտած, անգադար կրակ են թափում հայերի վրա։ Զինուորները ուզում են յարձակվել, տունը քար ու քանդ անել... Բայց յանկարծ հրաման են ստանում ուրիշ տեղ գնալ, աւելի կարևոր գործ տեսնել... Երբ այդ լուրը տարածվում է հայոց մասում, ամենքի երեսին ուրախութիւն է փայլում։

Թիֆլիսից նոյեմբերի 20-ին մեկնեց գեներալ Մարտան խաղաղացնելու... Դեներալը եկաւ, առաջարկեց հաշտվել, բայց հայերը շատ հիանալի կերպով պատասխանեցին. «Ձերդ գերազանցութիւն, զսպեցէք այդ գազաններին։ Մեզ ոչ էք ասում հաշտվել։ Մ[illegible]թէ երբ և է մենք կռիւ ենք սկսել։ Ձեզ օրինակ Թիֆլիսը, Ալէքսանդրօպօլը, Ախալքալաքը, Նոր-Բայազէտը. այդ տեղերում մենք անպէտն մեծամասնութիւն ենք կազմում և մի ժամում հայերը ընաջնջ կանէին բոլոր թուրքերն, եթէ յարձակվել, կոտորել, գազանութիւն անել ուզենային... Մենք ուզում ենք խաղաղ ապրել, խաղաղ զարգանալ։ Հապեցէք այդ գազաններին։ Մենք հաշտվելու ոչինչ չունինք։ Թող ձեռք չտան, եթէ ոչ այստեղից կը կոտորենք բոլորին»։

Զգում է դեն. Մարտան հայերի սրտից բղխած այդ անկեղծ խօսքերի արդարութիւնը... Բայց ի՞նչ կարող է անել...

Ցեղափոխական հայական հրդեհը բռնկվել է Մայր—Թուսատանում։ Այդ հրդեհի մի մասն էլ այրում է Կովկասը։

Բէակցիան, ասիական կոպիտ բռնակալութեան ողբալի մնացորդներն ուզում են հանդիսանալ Կովկասի յեղափոխական հրդեհը... Բայց զգեցեալ բիւրօկրատիայի ձեռքին հրդեհաշէջի դերը կատարում է հայի սիրտը, իսկ ջրի տեղ գործ են ածում մեր, հայերիս ար արիւնը։

Նախ քան Գանձակի արիւնոտ դէպքերի նկարագրութիւնը վերջացնելը, չեմ կարող մատանիշ չանել մի գաղ, մի ոգեալի տեսարան։

Գազանացած թուրք խուժանին բաղարի հրապարակի վրա իր շուրջն է հաւաքել, տակ ձիու վրա նստած մի մարդ։ Նա ճառ է խօսում, ոգևորում, խրախուսում է ամբոխին։ Նա գրգռում, էլեկտրականացնում է նրանց գնալ հայերի վրա, կոտրել, կողոպտել, այրել, սպանել... Նա հայի արիւն է ուզում։

Եւ այդ մարդը հայ-թուրքական խաղաղաբար կօմիսսիայի նախագահ է։

Ահա մեր խաղաղաբար կօմիսսիաների, այդ կօմէդիաների վերջնական արդիւնքը։

Խ.

ԱՂԷՏՔ ԳԱՆՁԱԿՈՒՄ

Նոյեմբերի 18-ին

Այսօր, ամսոյս 18-ին ժամի 9-ին քաղաքի զանազան մասերում կոտորած սկսեցին թուրքերը։ Ես այս րոպէին գտնվում եմ այնպիսի խստերիթական դրութիւնի մէջ, որ խստանալվում եմ անկարող եմ լինելու նկարագրելու իմ տեսած լսածի տպաւորութեան ամենանշան սասերը։

Բաղուի, Շուշու կոտորածի ականատեսները, բաղդատելով Գանձակի կոտորածի հետ, փոքր էին տալիս այնտեղի կոտորածին։ Դժբախտութիւնը նրանումն է կայանում, որ հայերի բաղդից կարվել է փոստի և հեռագրի հաղորդակցութիւնը զործադրելի պատճառով։ Մեր յոյսը զրել ենք գեներալ Տակայշվիլու վրա, մենք հնարաւորութիւն չունենք ուրիշ քաղաքների ազգայիններին տեղեկանալու, որ գնան խնդրեն երկրիս կառավարչապետն կոտորածի առաջն առնելու համար, քանի որ այդ մշտական կարելի է, հնարաւոր է, բայց ազմիկաարացիան իր անտարբեր ու անոգ վարմունքով տարածում է կոտորածը։ Ի զուր չէին ասում շատերը, որ մինչև թուրքերը ամարանոցից չը վերադառնան, տեղատեսել լինեն, մինչև իրանց այգիները չը քաղեն, կոտորած չէին սկսելու։ Այդ հին, բայց մշտական նոր ցաւի մասին թողնենք մի քիչ յետոյ գրելու, դառնանք կոտորածի համառօտ նկարագրին։ Ամսոյս 17-ին Անդիշարի մէջ հինգ մի մեծ ոգով ունեցան. նրանք խորհրդակցութեան առարկայ են դարձրել Զովղաի և Զայլիի գեպքերը, որի մասին ձեզ արդէն գրած եմ։ Երբ գուրս են գալիս ժողովից, ծանօթ թուրքերի մի քանի հայերի նախազուշացնում են, միւս օրը, ուրբաթ, բաղար չը գան, և յայտնում են թուրքերի վառ տրամադրութեան մասին։ Հէնց այդ օրը թուրքերի մի թուլիկ խումբ ընկնում են հայերի այգիները, մի քանիներին կողոպտում, մի քանիների վրա հրացաններ արձակում։ Միւս օրը, ուրբաթ, բոլոր հայ մշակները հրաժարվեցին հայերի այգին մշակութեան գնալու, բացի մի քանիից։ Ուրբաթ առաւօտեան հայոց թաղի Զուլա չիների կոչվող մասում, սպանված, ըստ երևոյթին ուրիշ տեղից բերած գան երկու թուրքերի դիակ։ Այս երկու չալիցի թուրքերի սպանութիւնը, եթէ ասենք ամիսի առաջ կոտորած առաջ բերելու, չարաչար սխալված կը լինենք, բայց որ դա մի ամիսի էր ու պատրուակ, ստեղծած թուրքերի կողմից, կոտորած առաջ բերելու համար—այդ ողղակի անհերքելի ճշմարտութիւն է։

Առաւօտեան ժամի 7-ին սպանվածների վայրը եկան բաւական զինված թուրքեր, և սպառնողական դիրքեր բռնեցին։ Լուր հասաւ, որ հայոց այդ մասով մշակները չը գնան այդին բանելու, գիւղացիներին զգուշացրին այդ ճանապարհով գիւղ վերադառնալու, չը նայած որ այդ տեղը գտնվում է հայոց թաղում։ Եկան բաւական թով յայտնի հեղինակաւոր թուրքեր, կանգնեցրել թուրքերի դիակը ասպան իրանց մասը։ Դեռ առաւօտեանից նկատելի էր շուկայում թուրք երեխաների բացակայութիւնը սայլերը չէին լծել, կառքերը նոյնպէս, թուրքերի սփաիից զանգատ էր թափվում, պարզապէս երևում էր նրանց մտադրութիւնը, բայց հայերից ոչ ոք չը վատահացաւ խանութները փակել ու գնալ իրանց թաղը... ժամի մօտաւորապէս 9-ին լուր տարածվեց, որ թուրքերը Զուլի կոչվող մասում (թաղ) յարձակվել են հայերի վրա, կոտորում են, մինչև ժամանակ լսվեց, որ կոտորած են ոկսել «Թոփչի» մասում։ Հայ զինված ուժերը վազեցին այդ վայրերը, բայց պարզվեց որ դա մի դատարութիւն էր հայերի ուժը վերցիշելու մասերում կենտրոնացնելու, որպէս զի իրանք ազատ լինեն բաղարի թէ անզէն անպաշտպան հայերին կոտորելու, սրի անցնելու և թէ հայերի ապրանքները թալանելու ու հրդեհելու։ Այդպէս էլ եղաւ. ժամի մօտաւորապէս 10-ին, թուրքերի ու թուրք ոստիկանների մէջ նկատվում էին տենդային, շարժումներ աջ ու ահեակ, կասածելի հայհոյքներ ու փսփսոցներ։ Ապա նա կռաք նստեց հեռացաւ թէ չէ, յանկարծ զինված թուրքերը, առանց բոպէ կորցնելու, միաժամանակ, բաղարի այս ու այն մասում, հրացաններով ու սարճանակներով յարձակվեցին հայերի ու նրանց խանութների վրա, բաւականին հայեր կոտորեցին, բոլոր հայերի ապրանքները, ոստիկանների, զինուորների աչքերի առաջ, թալանեցին, սայլերով, կառքերով կրեցին իրանց տները, ու խանութները հրդեհի մատնեցին։

Հայերի մի մասը տեղնուտեղը կոտորեցին, մի մասը կատարեալ հրաշքով ազատվեցին, այստեղ կամ այնտեղ կամ հիւրանոցներում թաքնվելով։ Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս այստեղ զօրքը բաւական ուշ վրա հասաւ, իսկ հայերից ոչ ոք չը վատահացաւ խանութները փակել ու գնալ իրանց թաղը... ժամի մօտաւորապէս 9-ին լուր տարածվեց, որ թուրքերը Զուլի կոչվող մասում (թաղ) յարձակվել են հայերի վրա, կոտորում են, մինչև ժամանակ լսվեց, որ կոտորած են ոկսել «Թոփչի» մասում։ Հայ զինված ուժերը վազեցին այդ վայրերը, բայց պարզվեց որ դա մի դատարութիւն էր հայերի ուժը վերցիշելու մասերում կենտրոնացնելու, որպէս զի իրանք ազատ լինեն բաղարի թէ անզէն անպաշտպան հայերին կոտորելու, սրի անցնելու և թէ հայերի ապրանքները թալանելու ու հրդեհելու։ Այդպէս էլ եղաւ. ժամի մօտաւորապէս 10-ին, թուրքերի ու թուրք ոստիկանների մէջ նկատվում էին տենդային, շարժումներ աջ ու ահեակ, կասածելի հայհոյքներ ու փսփսոցներ։ Ապա նա կռաք նստեց հեռացաւ թէ չէ, յանկարծ զինված թուրքերը, առանց բոպէ կորցնելու, միաժամանակ, բաղարի այս ու այն մասում, հրացաններով ու սարճանակներով յարձակվեցին հայերի ու նրանց խանութների վրա, բաւականին հայեր կոտորեցին, բոլոր հայերի ապրանքները, ոստիկանների, զինուորների աչքերի առաջ, թալանեցին, սայլերով, կառքերով կրեցին իրանց տները, ու խանութները հրդեհի մատնեցին։

Հայերի մի մասը տեղնուտեղը կոտորեցին, մի մասը կատարեալ հրաշքով ազատվեցին, այստեղ կամ այնտեղ կամ հիւրանոցներում թաքնվելով։ Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս այստեղ զօրքը բաւական ուշ վրա հասաւ, իսկ հայերից ոչ ոք չը վատահացաւ խանութները փակել ու գնալ իրանց թաղը...

լինի։ Մենք կը տեսնենք մի մուրացկան կառավարութիւն՝ բանուորների մուրացկան ամբոխի և քաղցած զօրքի գլուխն անցած. զօրքը հարկաւոր կը լինի արձակել, քանի որ հնար չի լինի նրան կերակրել։ Սոված ամբոխը, ընդհանուր անանկութեան պատճառով, անգործութեան մէջ կարող է գոյութիւն պահպանել միայն կողոպուտներով. ամէն մէկը, որ կը փորձէ կանգնեցնել այդ համատարած թալանը, կը կողոպտվի և կը սպանվի։

Ամէն մի «ժամանակաւոր կառավարութիւն» այսպէսի պայմանների մէջ կարող է գոյութիւն ունենալ միայն շատ կարճ ժամանակով։ Ամէն կողմից առաջացող անբախայի այն իսկ յորձանքը, որ այժմ սպառնում է օրինաւոր կառավարութեան, շատ շուտով կոչնչացնէ և ամէն մի յեղափոխական կառավարութիւն. մասնայի կառավարութիւնը այն ժամանակ կուզվի ընդհանուր աղքատացման իսկական կամ ենթադրվող պատճառների դէմ, ջարդի կենթարկվի ամբողջ ինտելիգենցիան։ Ժողովրդական մասսաները կը սկսին առանց զանազանելու կոտորել ամենքին, որոնք հագած ունեն գերմանացի գլխա—պահպանողականներին էլ, լիբերալներին էլ, յեղափոխականներին էլ։ Մուրացկանների անկարգ հրոսակները կը թափառեն ամբողջ Ռուսաստանում, թալանելով և այրելով ամէն ինչ ճանապարհին։

Կարող չէ այնպէս լինել, որ ընտրութիւնների կասեկական չորս անգամեան ձեռակերպութիւնը կը կատարվի ուսուց ինտելիգենցիայի համար մի բոլորովին ինքնուրոյն և մինչև այժմ չը նախատեսված ձեռվերը ժողովուրդը ամէն ինչ հոգի հետ կը հաստատեցնէ, Ռուսաստանի ուսերակների վրա կը մնայ միայն գերմանատուն—ինքնակոչ, ուղիղ, գաղտնի եւ հաւասար վիճակ մեզանից խուսափելիի համար։

Եւ եթէ բանը այսուհետև չը հասնէ, մինչև սրանից շատ լաւ բանով կը վերջանայ։ Դիցուք թէ «ժամանակաւոր կառավարութեան» Պետերբուրգում կաղնոզվի պահվել իր սեղանում։ Կարող է որ և է մէկը լուրջ կերպով երևակայել թէ նրան կաղնոզվի հպատակեցնել ամբողջ Ռուսաստանը։ Այն ժամանակ չէ՞ սկսվի կռիւ զանազան կուսակցութիւնների մէջ։ Հնարաւոր է ամուր համաձայնութիւն հէնց գոնէ ծայրայեղ կուսակցութիւնների մէջ։ Արդեօք այն ժամանակ մենք չենք տեսնի իւրաքանչիւր քաղաքում իր առանձին ժամանակաւոր կառավարութիւն, որ չէ ճանաչում ոչ մի ուրիշ կառավարութիւն։ Նոր վերջացած դեմոկրատիկ համագումարում յանախ լսվում էին խօսքեր. «Սարատովի են ոչ թէ յեղափոխական կուսակցութիւնները, սարատովի է անարխան։ Եւ ճիշտ որ այդպէս է. որովհետև անարխան, հէնց որ կը հաստատվի երկրում, շուտով վերջ կը դնէ բոլոր, նոյն իսկ և ծայրայեղ կուսակցութիւններին։ Ամբողջ հարցը միայն այն կը լինի, թէ ով շուտ և ով ուշ կոչնչանայ։ Իսկ անարխան ամէն տեղ կը հաստատվի, հէնց որ գիւղը կը լսէ թէ Պետերբուրգում այլ ևս օրինական կառավարութիւն չը կայ։

Ահա ինչ զարհուրելի պատկեր է ներկայանում լիբերալ կուսակցութեան։ Ո՞րն է ելքը։ Միայն ելքը երկիրը կործանումից ազատելու համար՝ նիրկայ կառավարութեան ոչնչացումն ցոյց տալն է, այն անդրդուելի պայմանով սակայն, որ հոկտեմբերի 17-ի բոլոր սահմանադրական հիմքերը անշեղ և անյապաղ գործադրվին։ Այդպէս էլ, ինչպէս յայտնի է, վճռել է գեմսկոյի գործիչների համագումարը։ Օսցիալիստական կուսակցութիւնները այդ պատճառով կառապի յարձակումներ են գործում այդ գործիչների դէմ։ Իշխան Տրուբեցկոյ ասում է այդ առիթով.

Ինչ վերաբերում է այն անամօթ հայհոյանքներին, որ կը թափեն մեզ վրա ձախակողմից, մենք պիտի թողնենք նրան առանց որ և է ուշադրութեան։ Սեփական արժանապատուութեան տարրական զգացմունքը պիտի ասէ մեզ, որ մենք ինքներս ենք մեր աչքերը և թէ մեզ վրա տէրեր չը կան ոչ աջակողմից և ոչ ձախակողմից։ Ցարդանքի արժանի է միայն նա, ով քաջութիւն ունի լինել այն, ինչ է։

*

Ցաղթական, ամենակարող է համարվում յեղափոխական պրօկլամացիան։ Բայց ահա սկսվում է նրա ընդհարումը կապիտալիստական կազմակերպված դիմադրութեան։ Պետերբուրգի բանուորութիւնը վճռել էր յեղափոխական միջոցով, այսինքն ուժով, 8 ժամեայ բանուորական օր մտցնել։ Բայց այդ ոչնչութիւն չունեցաւ։ Գործարանատէրերը, իսօք մի արած, փակեցին իրանց գործարանները։ Կառավարութիւնն էլ այսպէս վարվեց։ Հետևանքը։ Այսօր միայն Պետերբուրգում 100,000 բանուոր առանց գործի են մնացել։ Օսցիալ-դեմօկրատական այդ ուժով մի շարք պատնէշներ է կարգում կառավարութեան և գործարանատէրերին։ «Начало» լրագիրը խոստովանում է, որ պրօլետարիատը հաղթանակի ենթարկվել է ոչ միայն Պետերբուրգում, այլ և ամբողջ Ռուսաստանում—Մոսկվայում, Եկատերինօսլավում, Խարկովում և ուրիշ քաղաքներում։

Թող—ասում է լրագիրը—մի թեթև հաւատացք գոյն գիւղում արծարծվող հրդեհի և Սեվաստօպոլի՞վրա. այդ հաւատացքը կը յիշեցնէ թէ պրօլետարիատը մենակ չը մնաց իր կռիւ մէջ... Գործարանները պիտի բացվին, բոլոր հաշիւ տուցած բանուորները պիտի յետ ընդունվին։

Ի՞նչ միջոցով պէտք է հարկադրեն բաց անել գործարանները։—Ընդհանուր քաղաքական գործադուլ է այստեղված, և լրագիրը ողջունում է այդ քայլը։ Բանն այն է, որ ընդհանուր գործադուլը չէ իրականանում։ Նայելով լրագրի սպառնալիքներին, մնում է գիւղացիական շարժման և Սեվաստօպոլի ապստամբութեան պէս բաների սպասել։ Այսինքն արիւնհեղութիւն, քարուքանդ արած երկիր։

Դժբախտ երկիր...

*

Գանձակի կառավարչի տեսքով «Возрожденіе» թերթը գրում է.

Այժմ բոլորովին պարզ է, որ գոյութիւն ունեցող իշխանութիւնները ոչ միայն ընդունակ չեն վաղօրոք սանելու թուրքերի շարժման առաջը, այլ ընդունակ չեն նոյն իսկ կանգնեցնել և սահմանափակել։ Միակ յոյսը հասարակական ոյժերի վրա է, ժողովրդի օգնութեան վրա։

...Հասարակական ոյժեր, միացէք։ Պրովոկացիան յաղթանակում է։ Պատասի ազատութեան վտանգ է սպառնում։

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XLIII

Հիմա էլ Գանձակը... Արեան և կրակների մէջ...

Նորից յուսահատ սուզ ու հառաչանք։ Նորից կը սկսին սարսափների մնոուն, անվերջ դէն սկսեց արիւն-արտասուք թափել։ Ինչպէս մէջտեղ...

Փետրվարի 6-ից մենք գրում ենք, գրում ենք։ Սրատաճիկի պատկերներ, զարհուրելի պատճառող փաստեր, քսանների իրողութիւններ, արտասուալից նկարագրութիւններ։ Ոչինչ, ոչինչ չօգնեց։ Իրականութիւնը այսօր էլ անփոփոխ է. գազանային սիրտը չէ փոխել իր մի գիծն անգամ։ Զինվիլ-խանի բարբարոս օրդուները քրիստոնեայ կառավարութեան թաթարական քաղաքականութեան հովանու տակ... Նրանք միասին, իրար հետ զրկված, առաջ են տանում իրանց վայրենի գործը—Ջնջել հայութիւնը, նաև նրա գերեզմանի վրա։

Այլ ևս մի նտարի, մի սպասիր։ Սպասելու ոչ մի տեղ չը կայ։ Հաւաքվիր, ձուլվիր սիրասին, ծածկիր քեզ պաշտպանութեան պղտվատ վահանով։ Վառնգը զարհուրելի է, հայ ժողովուրդ։

Գրվում մի կորցնիր այն պատճառով, որ քո հարուստները կամ փախել կորել են, կամ դեռ զգուելի չարչիութեամբ են աշխատում քշով ազատվել այս մայլ օրերի դրած տեղ պարտականութիւնից։ «Թքիր նրանց վրա, ինքդ քո փոքրիկ միջոցները բեր, հաւաքիր միասին, զարձրու մի մեծ ոյժ, ոչինչ մի խնայիր քո գոյութիւնը սրի ու գերեզմանի բերանից պահպանելու համար...

Շատպէր, հայ ժողովուրդ, միացիր այն զինված ինքնապաշտպանութեան հետ, որ ամբողջ առաջաւոր Ռուսաստանը պատրաստում է ամէն ոյժ սպասող հոսանքների, արիւնոտ փոթորիկների դէմ։

Դու, դու, դու թշնամուդ ան ազգով, դու քո գլխուդ բարձի վրա կը թնեմ։ Ասում են թէ ինչ քաղաքականութիւն պիտի որոշի դու քեզ համար։

Բոլոր, հանգամանքները, արիւնն ու կրակները վաղուց արդէն որոշել են այդ քաղաքականութիւնը։ Դու կանգնած ես քո տան շէմքում։ Աւագակ չը, չէ՞, ասիչ չես, լցված ես անկեղծ խաղաղասիրական, կուլտուրական տենչերով։ Ո՞վ մօտենում է քո շէմքին իբրև բարեկամ, դու նրան կարկառում ես եղբայրութեան ձեռք։ Իսկ ով թշնամի է, ով արիւն և կրակ է ուզում մտցնել քո տունը, նա հանդիպում է քո շէմքում դիմադրութեան պողվատին։ Դու չես յարձակվում, դու չես արշաւում։ Դու միայն և միայն ինքդ քեզ պաշտպանում ես, պաշտպանում ես քաջարար, առանց ընկրկելու, առանց թուլանալու, այս ու այն կողմ նայելու։

Ահա ինչ՝ պիտի լինի քո սրբութիւն սրբոցը, քո հաւատամքը։ Առանց զրան՝ դու զիակ ես։ Առանց բոպէ կորցնելու—ազգային ինքնապաշտպանութեան դրօշակի տակ։ Շտապիր, հայ ժողովուրդ, ամէն բոպէ թանդ է։ Ամէն կորցրած բոպէ արեան գետեր ու աւերակների կոյտեր պիտի բերէ քեզ...

Լ.

ՎՏԱՆԳԻ ՇՐՋԱՆԻՑ

Սարով գիւղում, նոյեմբերի 16-ին։

Մենք վանքաւոր տեղում ենք ապրում։ Մեր և հարևան գիւղերը Զիւանշիրի գաւառի տափարակային մասումն են գտնվում։

Մեր գիւղերը անջատված են մեր հայազգի լեռնային գիւղերից և շրջապատված թուրքերով։ Մեր բախտն են վիճակված բացի մեր Սարով գիւղից հարևան Հասանդպան, մեզանից քսան վերստ հեռու, որը շրջապատված թուրքերով, մի օազիս է ներկայացնում։ Զանգիլար մեզանից 5—6 վերստ հեռու նոյնպէս շրջապատված է թուրքերով։ Զարամանդ փոքրիկ հայ գիւղը 2—3 վերստի վրա թուրք գիւղի հետ խառն։ Մարալիան, բայց այս գիւղը մեզ սահմանակից է, միւս կողմերով դարձեալ շրջապատված թուրքերով։

Անմիջապէս Բաղուի գեղջերից յետոյ, մեր հարևան թուրքերը մեզ հետ լաւ էին վարվում և միշտ ծիծաղկոտ դէմքով հայհոյում էին՝ Բաղվում, Երևանում և Նախիջևանում կատղողներին թէ՝ «մեր ինչ պարքն է, թող ուրիշ տեղը իրար միս ուտեն, մենք պէտք է իրար հետ հաշտ, սիրով ապրենք»։ այսպէս էին մեզ հաւատացնում մեր քիրվանները։

Սակայն մենք չէինք կարող չը նկատել, որ կեղծ է ժպիտը և նախազգում էինք թէ ինչպիսի թոյն է պատրաստվում դրանց սրտերում։

Ինչպէս ամէն տարի, այս տարի էլ սովորական նմանն, մեր շրջակայ թուրք հարևանները, համարեա ամէն մի մարդ իր քիրվան ունի, բերին իրանց տնային ծանրոցները գրին հայերի տներում և իրանք էլ հայերից վերցրին ընտանի անասուններ՝ եզ, գոմէշ, ձի և այլն, որոնք ամառը մեզ հարկաւոր չէին գալիս, բարձեցին իրանց շալիշուլիման ու չուեցին եայլաղ։ Այսպէս մենք նրանց տնային ծանրոցները պահեցինք մեր տներում և նրանք էլ մեր անասուններ սարերում։

Բայց գրութիւնը փոխվեց եայլաղաւորների իջնելու ժամանակ, մանաւանդ Վանքի դէպքից և Շուշու կոտորածից յետոյ։ Օր օրի վրա չարագուշակ լուրեր էին հասնում մեզ, «թէ Սարովի հայերի վրէժը պէտք է առնենք այս գաղտային հայերից»։ Եւ մենք զգում էինք այդ, որ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև սովորականին հակառակ, մեր քիրվայ թուրքերը մեզ պահուած իրանց ծանրոցները և ամանները, դեռ իրանց քոչը տեղ չը հասած, գալիս տանում էին տնդպային տրաքութիւնը և մեզանից ծածկում էին Վանքի գէպքը, ասելով թէ թուրքը թուրքի հետ է կռուել, հայի հետ ոչինչ բան չէ պատահել։ Բայց դրանց այդպէս շուտափոյթ իրանց ծանրոցները տեղափոխելը մեզ կասկածանքի տակ ձգեց և մենք իմացանք, որ կռիւը եղել է և հայի հետ և մեզ մեծ վտանգ է սպառնում։ Մանաւանդ յիշում էինք մի քանի թուրք կանանց խօսքերը, որոնք ասում էին. «Ասուած թողնէ եայլաղից սաղ սարսամթ հետ դառնանք, տեսէք ձեր գլխին ինչ կը դնենք, այ հայեր»։

Շուշու ցաւալի դէպքից յետոյ ամէն ինչ իրականացաւ։ Ամբողջ Զիւանշիրի գաւառ ՀԱՅԸ լցվեց թուրք բէկերով, խաներով և Շուշի-քաղաքի ընակիչներով, որոնց ամէն մէկը դառնալով մի մի ագիտատոր՝ քարոզում էին և գրգռում թուրք զանգվածի՝ խեղճ անպաշտպան հայերիս դէմ։

Այդ բէկերի մէջ աչքի է ընկնում իր վատ գրգռիչ քարոզներով Բահաթը բէկ Կալաբէգովը, որը բոլոր թուրքերին հաւաքել տարել է Բաղու խմբում երդվեցրել՝ թէ չը պէտք է իրարից զղջութիւն անենք և ինչ հայի որ պատահելու լինէք, երբէք չը պէտք է խնայէք։ Եւ ահա այսօր տեսնում ենք այդ բոլորը իրականացած։ Ամէն մի ազգեցիկ անձն, լինի բէկ, խան և թէ ռահաթ, ունի իր խումբը, բաղկացած 100—200 և մինչև անգամ 1000 հեծեալ զինված՝ պատրաստ և սպասելիս և ամենաչնչին դէպքում յարձակում գործելու հայ գիւղերի վրա։ Հասանդպայա գիւղի գրութիւնը մեզ անյայտ է. որովհետև թուրքերի երկիւղից յարաբերութիւն չը կայ։ Ղահրիլարը թուրքերից ճնշված և թալանված, տեղափոխվց մեր մօտ՝ Սարով, թողնելով տուն ու տեղ, այգիներ, բրնձի և բամբակի ցանքեր թուրք խուժանի կամքին։ Ղարաչիարու գեղքից յետոյ, որտեղ հաւաքվել էին 2000 ձիաւոր զինված թուրքեր, որոնք չը կարողացան առաջ խաղալ, վերադարձին սպառնական դիրք բռնեցին դէպի Մարալիան հայաբնակ գիւղը, և թուրքերի ճնշման ներքոյ տեղափոխվեցին նոյնպէս մեզ մօտ՝ մի կերպ գլուխները ազատելով. Ինացածը ինչ որ կար, ասան թալանի գնաց, մանաւանդ ցորնի ամբարները և հարեմը հարեան թուրք Խան-Ղարքանդու խուժանին։ Թէ Ղահրիլարի և թէ Մարալիանու տների զոնները, լուսամուտները և այլ շարժական և անշարժ իրեր, երկրագործական գործիքներ, հաւ, հուս, բոլորը, բոլորը։ Մարալիան գիւղի տեղափոխութիւնը պակաս չը նպաստեց և թափ տալուն գիւղի մօտ երեք մարալիանցու սպանվելը թուրքերի ձեռքով։

Այս քանի օրերս թուրքերը լուր բերին մեզ, թէ Հասանդպայա գիւղի վրա յարձակում է եղել, սակայն գիւղի վրա յարձակվելը սուտ եղաւ, բայց նոնդից քշել տարել են 200 գլուխ տաւար և մէկ մարդ տակից վիրաւորվել է և մի քանի օրից յետոյ վախճանվել։ Դեմիրալ Ցակայշվիլին եկաւ Թաթիա և մեր բոլոր գիւղերից գնացին գանգատվելու և իրանց ցաւերը յայտնելու։ Այնտեղ գեներալ-նահանգապետը հրամայում է Բահաթիը բէկ Կալաբէգովին, որ շուտով վերադարձնեն Հասանդպայա գիւղի անասունները, սակայն փոխանակ Հասանդպայու անասունները վերադարձնելու, յարձակվեցին օրը ցերեկով և մեր Սարովի հանդից քշեցին տարան 133 գլուխ տաւար և ձի, զեկավարութեամբ Մահմադ բէկի (վօլոսնոյ սարշինա) և մերոնք հաւարին հասան այն ժամանակ, երբ արդէն ուշ էր։ Թուրքերը, երեք տեղից գիրք բռնած, կրակ բացին մեզ վրա. այդ բոլորի մասին արդէն յայտնել ենք գաւառապետին և ոչ մի տեղից օգնութիւն չէ եղել։

Քանիցս անգամ կամեցել են մեզ խաբել, գիւղից հանել, որպէսզի յարձակվին կոտորեն, բայց չէ աջողվել։ Շատերից յետոյ մի դէպք. գիւղի կալուածատէր Մամադ-ագա Աբդալանովը մէկ կեղծ նամակ է գրում մեզ թէ՝ իբրև կամենում է տեսնվել գիւղի սահմաններում քանի անուանի մարդկանց հետ, որտեղ դարան մտած սպասելիս են լինում 300 զինված թուրքեր Կալաբէգովի և Շերին-Բայրամ օղլու դեկավարութեամբ (վօլոսնոյ սարշինա), որպէս զի ամբողջ կերպով կոտորեն և գիւղը մեզ անպաշտպան և յետոյ յարձակվեն գիւղի վրա հիմնայատակ կործանելու, բայց մէկ թուրք, կրօնով սիւննի, յայտնում է հայերին դրանց դաւադրութիւնը և այդպիսով ազատվում ենք վերահաս չարիքից։

Գիւղից չորս հոգի գնում են Ղահրիլար, որպէս զի օգնեն բերելու երկու սայլ իր մարդկանցով։ Ճանապարհին Իսմայիլ-բէկ Խորոլվենկին, Մաշադի Իսմայիլին, 100 զինված թուրքերով, յարձակվում են դրանց վրա. մէկին սպանում են և երկու ձին խլում, իսկ մնացածները փախչում են մի կերպ ազատվում։ Գործը այժմ քննիչի՞ մօտ է և Իսմայիլ բէկը, որը յայտնի է և Սիթեր Իսմայիլ անունով, բռնված է։

Եւ ահա այսպէս օր օրի վրա մեր դրութիւնը վատացաւ։ Օր չէ անցնում, որ գիւղի մէջ իրարանցում չը լինի։ Ամէն մի քսան բարձրացած ժամանակ, գիւղի չորս կողմով շղթայ ենք կազմում մինչև քառասունվեցը, որպէս զի գիւղը չը հրդեհեն։ Զարանցածս բոլորովին չը կայ. մեր բամբակի և բրնձի ցանքերը մինչև Երևան, Մինգեչաուր, Ղազախ-Հաղուլի, Սարալլի, Ջամիլու և այլն ընկած են թուրք խուժանի կամքին։ Նոյն իսկ մեր հանդում եղածներն էլ չենք կարողանում հաւաքել։ Ո՞ւր կը տանէ մեզ այս դրութիւնը, մենք էլ չենք հասկանում։ Մանաւանդ ծանր է հարեան հայ գիւղերի ընակիչների դրութիւնը, որոնք մեզ մօտ հաւաքված մնացել են առանց հացի, վառելիքի, և սարդկային կեանքը բոլորովին անմեղ դրված էին կախաղանի ծայրին։ և այդ կեանքերը կաջողվի փրկել միայն այն պատճառով, որ գլխաւոր հրամանատարը թոյլատրեց վճռարեկ գանգատներ տալ. և որ քաղաքացիական պաշտպանները լսեցին իրանց ամբողջ եռանդը, կռիւ մղեցին իրանց՝ բոլոր այժերով Բաղուի կառավարութեան դէմ...

Բաղուի դատավարութիւնը մի կատարեալ ծաղր է արդարադատութեան վրա այն վայրկենից, երբ նահանգապետ իշխան Նակաշիձէի սպանութեան գործը (փողոցում, ուռմբի պայթումից) քաղաքացիական կարգադրիչի գործերի դատաստանական քննիչի ձեռքից անցաւ զինուորական քննիչի ձեռքը։

Բաղաքացիական քննիչը աշխատեց այդ գործի վրա երկու շաբաթ, քաղաքում պրոտեստ էին լուրեր, որ նահանգապետի սպանութեան մէջ մասնակցել են հինգ մարդ, բայց մերկացնող վկաներից ոչ ոք չէր գալիս։

(Կը շարունակվի)

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍԵՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ

Պատահաղարական գործադուլից առաջ մենք համառօտ հեռագրական տեղեկութիւններ ունէինք Սեվաստօպօլում տեղի ունեցող զինուորական խռովութիւնների մասին։ Այնուհետև հեռագրի լռութիւններում միայն կան։ Մայրաքաղաքների լրագիրներում միայն սպասումներ ակզնաւորման մանրամասնութիւններն ենք գտնում։ Ահա թէ ինչ են նրանք պատմում։

Նաւատորներն արգելված էր մասնակցել ժողովրդական միտինգներին, որոնք տասնեակ հազարաւոր ժողովուրդ էին գրաւում։ Անբաւականութիւն ծագեց նաւատորների մէջ։ Նրանք հաւաքվեցին իրանց կարծիքները քննելու համար։ Նաւանգստում աշխատող բանուորները, թւով մի քանի հազար, միացան նրանց։ Միանգամայն արգելելու համար Բէլօստոկիան գունդից մի վաշտ և մի ուրիշ վաշտ էլ զինուորական նաւի նաւատորներից ուղարկեցին միտինգի տեղը։ Եկաւ կօնտր-ծովապետ Պիսարեվսկին, որ հրամայեց հրաժանագրութիւն սկսել եթէ ապստամբները չեն ցրվի։ Այդ ժամանակ մէկը այն նաւատորներից, որոնք եկել էին ապստամբներին խաղաղացնելու, երեք անգամ հրացան արձակեց ծովապետ Պիսարեվսկու դէմ, որ թեթև կերպով վիրաւորվեց։ Մխիթարը վերջացաւ երեկոյեան ժամը 7-ին։ Վեցվից միւս օրը, շաբաթ, ցոյց կազմակերպել նաւատորների և զինուորների մասնակցութեամբ։ Շատ հաւաքված զինուորների զինաթափ արին։ Շաբաթ առաւօտեան նաւատորները դուրս եկան զօրանոցներից և միացան Բրեստեան գնդի զինուորներին։ ամենքը առանց զէնքի։ Նրանց հետ միացան նաւատորական բանուորները, որոնք գործադուլ էին արել։ Կէսօրից մօտ ցուցարարները թափօրով անցան քաղաքով օրինակելի կարգապահութեամբ. աջից գնում էր նաւատորների խումբը, որ գնում էր թափօրի առաջից և տանում էր յեղափոխական դրօշակներ։ Գալով կենտրոնական Եկատերինայա փողոցը, ցուցարարները «Боже царя храни» հիմն նուագել տալով, անցան Բէլօստոկիան գնդի մօտով, որ կանգնած էր Պատմական բուլվարի հրապարակում։ Այդ գնդի մի վաշտ զինուորական պատիւ արաւ, ցուցարարները անցան իրանց զօրանոցները։ Երեկոյեան կատարվեցին բերդը եկած գլխաւոր հրամանատար գեներալ Նեպլուեվ և գեներալ Սեպէշնիկով, որոնք մի քանի ժամից յետոյ արձակվեցին։ Գիշերը Բրեստեան գունդը տեղափոխեցին բանակատեղին։ Զինուորների մի մասը փախուստ գնաց ովսային զօրանոցները։ Կիրակի առաւօտեան Սիմֆերօպօլից հասան զօրքեր։

Առհասարակ ապստամբված զինուորական մասերը խաղաղ են պահում իրանց, բանուորների չեն դիմում։ «Очаковъ» զրահակրի վրա ծարձրացած է յեղափոխական կարմիր դրօշակ։ Նրա հրամանատար է ընտրվել լեյտենանտ Շմիտ, որի մասին տեղեկութիւններ էինք տուել «Մշակի» մէջ։

Սօցիալ-դեմօկրատական թերթերն ասում են թէ ամբողջ Սեվաստօպօլը ապստամբների ձեռքին է։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» երեկվայ համարը լոյս չը տեսաւ տօնի պատճառով։ Մենք ցանկացանք համար դուրս բերել տեղեկութիւններ տալու հասարակութեան ներկայ տագնապալի օրերի ծանր դէպքերի մասին, բայց անկարելի եղաւ, որովհետև զբաղողների որոշումը ընդհանուր էր մամուլի բոլոր օրգանների համար։

—

Երէկ երեկոյեան, նոյեմբերի 22-ին, ժամի 8—9 ին, Թիֆլիսի «Ալիւրի մէջտեղի» և «Շէյթան բազար» կոչված հրապարակների մօտերքը տեղի ունեցաւ հրացանաձգութիւն, որ մեծ յուզմունք պատճառեց շրջակայ ընակիչներին։ Ձիրտ կերպով դեռ չէ պարզվել իրողութիւնը. պատմում են, որ պահապան հայերը նկատել են իբր թէ թուրքերը յարձակվում են ալիւրի հրապարակների վրա։ Ժամի 9-ին խաղաղութիւնը վերականգնվեց։

—

Կովկասեան նախկին կառավարչապետ իշխան Գօլիցին ընտրված էր մի ժամանակ պատուաւոր անդամ կովկասեան իրաւաբանական ընկերութեան մէջ։ Դիրակի օր ընկերութեան ընդհանուր ժողովում առաջարկ եղաւ դուրս գցել նրան պատուաւոր անդամների կազմից։ Առաջարկը ընդունվեց անդրդվելի մեծամասնութեամբ ընդդէմ 2-ի։

—

Երկուշաբթի, նոյեմբերի 21-ին, երեկոյեան ժամի 4½-ին հայոց բազարում մեծ իրարանցում պատահեց. մի թուրքի ձեռքից կուսակցութեան երկու մարդիկ խլեցին ատրճանակ։ Մի սարին ոստիկան 5-դ քաղաքացուն, ասում են, հարցած գրութեան մէջ տարածում էր՝ որ վրացիներին և հայերին պիտի կոտորեն. այդ զրգռիչ լուրը զայրացրեց անցորդներին և նրան տարճանակի հարուածով ծանր վերք հասցրին յիշեալ տեղը։ Վիրաւորված տարեկանին տարան Միքայելեան հիւանդանոց, իսկ այդ տրիածը մեծ իրարանցում գցեց ժողովրդի մէջ, խանութները անմիջապէս փակվեցին, ընակիչները ահաբեկված տները մտան և փակվեցան։ Առհասարակ ժողովուրդը վերջին արիւնոտ դէպքերի և տարածուած երկիւղալի լուրերի պատճառով դիւրագրգիռ է դարձել և լարված դրութեան մէջ է պրովոկատորների և խուլիգանների տարբերներից։

—

Թօփուզ կայարանի մօտ կայ բաղար, որտեղ կան մօտ 35 խանութ, որոնցից 14-ը հայերին են պատկանում, իսկ մնացածը թուրքերին։ Հայ խանութպաններին մի խումբ թուրքեր առաջարկում են իրանց ծառայութիւնը՝ կեանքի և գոյքի ապահովութեան համար։ Ամենս 20-ին երեկոյեան 9½ ժամին այդ թուրքերը խանութպաններից փող ստանալուց յետոյ, դուռ մտնում են և Մանսոր ագա Սկանդարբէգովի (յայտնի աւազակապետ Մահմադ ալի եղբայրը) առաջնորդութեամբ յարձակվեցին մի փակ հայ խանութի վրա և կողոպտեցին։ Հայերի դրութիւնը յուսահատական էր։ Ասում բէկ Սուլթանովը, որ մի հայասէր թուրք է, գնում է մօտակայ զօրամասի պարպօրշիկի մօտ, որ կայարանն է պահպանում, յայտնում է, որպէս զի օգնութիւն գայ. զօրքը գալիս է. աւազակները մի քանի անգամ կրակ են տալիս զօրքի վրա, որից յետոյ զօրքը սկսում է զալ տալ։ Թուրքերը թողնում են մի քանի սպանվածներ ու վիրաւորներ։ Դրանով չը բաւականացաւ օֆիցէրը, նա ամբողջ գիշեր անքուն հսկում էր բաղաբի վրա։ Կայարանի զիւաւորը զգալով, որ կայարանին վտանգ կարող է սպառնալ, Ղազախից զինուորներ է խնդրում, որոնք գալիս են առաւօտեան 3½ ժամին. աւազակները նրանց վրա հրացան են արձակում, որոնք զալ են տալիս և փախցնում նրանց։ Տեղական հաշտարար միջնորդը նախատինք է անում առաջին օֆիցէրին, թէ ինչպէս իր դիրքը թողնում և գալիս է պաշտպանելու խանութները. օֆիցէրը պատասխանում է, որ եթէ չը պաշտպանվի, անկարգութիւնը կը մեծանար և կը գային կայարանի վրա։ Հայաբէր Ասադ բէկ Սուլթանովը խորհուրդ է տալիս հայերին թողնել խանութները՝ հեռանալ, զգալով, որ հայերին կը կոտորեն իր ազգակիցները։ Հայերն էլ դատարկում հեռանում են։ Ամբողջ բաղաբը փակ է։ Շնորհ-

Շատ շուտ,—կարելի է այս օրերս, շատ կարելի է մինչև անգամ վաղը,—զինուորական գլխաւոր դատարանում կը քննվի վճռաբեկային կարգով իր տեսակի մէջ միակը, զինուորական դատաւորների ստեղծագործական երևակայութեան չափերով չը լսված գործը Բաղուի նահանգապետ իշխան Նակաշիձէի սպանութեան մասին։

Ժամանակաւոր զինուորական դատարանը Բաղու քաղաքում քննում էր այդ գործը երկու անգամ, այն է օգոստոսի 18-ին և 19-ին և սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 1-ը—ընդամենը ութ օր։ Եւ այդ ութ օրը բաւական էր, որ բացվի իր ամբողջ այլանդակութեամբ զինուորական-դատաստանական անիրաւութեան ամենասարսափելի պանօրամն։

Ֆէմիդային, արդարադատութեան ատուաձուռնն, նկարում են կապած աչքերով այդ կարծեցեալ կուրութեամբ նշանաբանվում է դատաւորական անկողմնակալութիւնը։ Իսկ Բաղուի Ֆէմիդայի աչքերը չէին կապել, և, այնուամենայնիւ, նա ոչ միայն կոյր հանդիսացաւ, այլ և վրդովեցնելու չափ ազէա դատաստանական պրոցէսի ամենասարսափելի հարցերում։

Երբ ես ծանօթացայ անչափաւոր Մանկօվկու պրոցէսի հետ Դիվնսկում, որը անմեղ դատապարտվեց մահվան պատժի, երբ ես ապա խօսակցեցի այդ պատանու պաշտպանների հետ, ես զայրանում էի արդարադատութիւնը ասնակոս անելու համար. բայց երբ զինուորական գլխաւոր դատարանը վերացրեց կայացրած մահվան դատավճիռը և իր վճռի մէջ որոշեց նկատողութիւն անել Դվինսկի պրոցէսում նախագահողին նրա թոյլ տուած դատավարական խախտումների համար, երբ ապա Մանկօվկին և նրա դժբաղդութեան ընկերը արդարացան, ես համարեցի, որ հասարակական խիղճը իր պատշաճ բաւարարութիւնն է ստացել։

Սակայն Մանկօվկու գործը ոչինչ բան է համեմատելով Բաղուի այդ գործի հետ թէ նիւթական և թէ դատարական շեղումների վրդովեցուցիչ բնաւորութեամբ, և ոչ մի կասկած չէ կարող լինել նրանում, որ գլխաւոր դատարանը կը փոխէ Բաղուի զինուորական-դատական կօլլեգիայի վճիռը, որը ապօրէն կերպով չորս մարդու դատապարտել է մահվան պատժի կախաղանի միջոցով և մի 16 տարեկան տղայի—երկարատև տաժանակիր աշխատանքների։

Անյայտ է մնում միայն այն, թէ Բաղուի զինուորական պրոկուրատորի, նոյնպէս Բաղուի «շէմեակին» դատարանի նախագահի և անդամների վերաբերմամբ զինուորական Ֆէմիդայի մեծ մեղքի համար ինչ կորոշ բարձրագոյն դատարանը։ Միթէ միայն «նկատողութիւն» կամ «յանդիմանութիւնը» կը լինի։ Միթէ «նկատողութիւն» կամ «յանդիմանութիւնը» ներկայ դէպքում արդարութեան վրդովված զգացմունքի բաւարար տրխուր կարող են լինել։ Ախր, մտածեցէք, ոչ թէ մի քանի խաղաքարեր, այլ մարդկային կեանքեր բոլորովին անմեղ դրված էին կախաղանի ծայրին. և այդ կեանքերը կաջողվի փրկել միայն այն պատճառով, որ գլխաւոր հրամանատարը թոյլատրեց վճռարեկ գանգատներ տալ. և որ քաղաքացիական պաշտպանները լսեցին իրանց ամբողջ եռանդը, կռիւ մղեցին իրանց՝ բոլոր այժերով Բաղուի կառավարութեան դէմ...

Բաղուի դատավարութիւնը մի կատարեալ ծաղր է արդարադատութեան վրա այն վայրկենից, երբ նահանգապետ իշխան Նակաշիձէի սպանութեան գործը (փողոցում, ուռմբի պայթումից) քաղաքացիական կարգադրիչի գործերի դատաստանական քննիչի ձեռքից անցաւ զինուորական քննիչի ձեռքը։

Բաղաքացիական քննիչը աշխատեց այդ գործի վրա երկու շաբաթ, քաղաքում պրոտեստ էին լուրեր, որ նահանգապետի սպանութեան մէջ մասնակցել են հինգ մարդ, բայց մերկացնող վկաներից ոչ ոք չէր գալիս։

(Կը շարունակվի)

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍԵՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ

—

Պատահաղարական գործադուլից առաջ մենք համառօտ հեռագրական տեղեկութիւններ ունէինք Սեվաստօպօլում տեղի ունեցող զինուորական խռովութիւնների մասին։ Այնուհետև հեռագրի լռութիւններում միայն կան։ Մայրաքաղաքների լրագիրներում միայն սպասումներն ակզնաւորման մանրամասնութիւններն ենք գտնում։ Ահա թէ ինչ են նրանք պատմում։

Նաւատորներն արգելված էր մասնակցել ժողովրդական միտինգներին, որոնք տասնեակ հազարաւոր ժողովուրդ էին գրաւում։ Անբաւականութիւն ծագեց նաւատորների մէջ։ Նրանք հաւաքվեցին իրանց կարծիքները քննելու համար։ Նաւանգստում աշխատող բանուորները, թւով մի քանի հազար, միացան նրանց։ Միանգամայն արգելելու համար Բէլօստոկիան գունդից մի վաշտ և մ

հակազդեցություն զօրախմբի օֆիցերին և Ասադ բէկ Մուշեղեանցին՝ բոլոր ազատվածների կողմից։

—

Կիրակի նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամի 5-ին, Թիֆլիսի II արական գիմնազիայի դահլիճում կայացաւ Բաքմիս միջնակարգ եւ ստորակարգ երկսեռ ուսումնարանների ուսուցիչների եւ ուսուցչուհիների համաժողով (միտինգ)։ Ժողովի գլուխն առարկան պիտի լինէր «Կովկասեան մանկավարժների դաշնակցութեան» համար ծրագրած կանոնագրութիւնը, որը կազմել էր կարգադիր յանձնաժողովից (բիւրօ) ընտրած յատուկ մանաժողովը. սակայն մեր շուրջը կատարվող սոսկալի երեւոյթները ժողովականներին այնպիսի լարված և յուզված վիճակի մէջ էին դրել, որ «կանոնագրութեան» նախագծի քննութիւնը մեզ առանց տեսութեան։ Ժողովի խօսակցութիւնների և զառաջադրութիւնների նիւթ դարձան՝ 1) պօսա-հեռագրական ծառայողների գործադուլը և 2) Դանձակի մէջ կատարվող արիւնահեղ բարբարոսութիւնները։ Թողնելով մանրամասնութիւնները այն արդար զայրոյթի և յուզմունքների, որոնք արտայայտեցին ժողովականներից շատերը այդ բարբարոսութիւնների և նրանց սարքող-պրովոկատորների դէմ մի ուրիշ անգամի, այժմ բաւականանում ենք հաղորդել մեր ընթերցողներին ժողովի որոշումը։ Զուտ ժամ շարունակվող ժողովը որոշեց՝ 1) յայտնել ժողովի բերանից իր համակրութիւնը պօսա-հեռագրական ծառայողներին՝ այն քաջարի դիմադրութեան համար, որը ցոյց տուին նրանք իրանց մարդկային և քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու գործում և հարկաւոր դէպքում՝ նիւթական օգնութիւն հասցնել նրանց. 2) յայտնել իր խորին ցաւակցութիւնը Դանձակի մէջ պրովոկատորների ձեռքով նահատակած զոհերին. խորին արհամարհանք և նզովանք բոլոր այդ և նման արիւնահեղ դէպքեր և շահատակութիւններ սարքող վարչական մարմիններին և պրովոկատորներին և պահանջել բարձր իշխանութիւնից բոլոր այն վարչական խուլիգան ծառայողների անմիջական արձակումը իրենց պաշտօններից, որոնք հոկ. 17-ի մանիֆեստից յետոյ մեզաւոր կը ճանաչուին յիշեալ արիւնահեղ դէպքերում, պահանջել հիմնադիր ժողովի (учредительное собраніе) բացումը, որը կարող կլինի վերջ տալ պետութեան մէջ արբող խուլիգան-վարչութիւններին, որոնք ժողովրդի անուր աղէտների պատճառն են և անմիջապէս զէնք ձեռք բերել ինքնապաշտպանութեան համար՝ կազմելով զինուորեալ (բազմիկ) խմբեր և հարկ եղած ժամին գուրս գալ ընդդէմ խուլիգանների և պրովոկատորների։

—

Թիֆլիսի 3-ղ արական գիմնազիան բարձր դասարանների աշակերտները, մասնակցութեամբ ուրիշ աշակերտների և աշակերտուհիների, կիրակի, նոյեմբերի 21-ին, կայացրին ժողով որտեղ խօսելով ներկայ արիւնահեղ դէպքերի մասին, որ տեղի ունեցան Դանձակում, վրդովեցին, զէնք ձեռք բերել և հարկաւոր դէպքում պատերազմի դուրս գալ ընդդէմ պրովոկատոր-խուլիգաններին, որոնք այդպիսի կոտորածներ և պատակութիւններ են առաջնորդում խաղաղ բնակիչների մէջ։

—

Կիրակի նոյեմբերի 20-ին, Նախալովկայում կայացաւ միացեալ միտինգ քաղաքիս գինեվաճառների, օղէվաճառների, հիւրանոց և նման հիմնարկութիւններ պահողների և սոցիալ-դէմօկրատների ու դաշնակցականների։ Դաշնակցականների ժողովի նիւթն էր՝ Դանձակի արիւնահեղ դէպքերը։ Բոլոր հռետորները խօսեցին այդ սոսկալի կոտորած սարքող խուլիգան-պրովոկատորների վերաբերութեամբ և մեղադրեցին հեռաւորը, մանաւանդ պահանջելով բարձր իշխանութիւնից վերջ տալ պրովոկատորական արիւնալի դէպքերին, հակառակ դէպքում՝ միացեալ ոյժով յեղափոխութիւն (ռեվոլիւցիա) առաջացնել։ Ժողովը բազմամարդ էր, հաւաքվել էին մի քանի հազար հոգի։

—

Մեզ հաղորդում են, Թիֆլիսում երկու երիտասարդ տեսնելով Թուրքերի մօտ զէնքեր, փորձում են նրանց զինաթափ անել և գրասով պատճառ են դառնում թիւրիմացութեան։ Թէև մեզ յայտնի է այդպիսի դէպքերի միայն մի օրինակ, այնուամենայնիւ, մենք կարեւոր ենք համարում նախազգուշացնել, որ ամեն միջոցներ ձեռք առնվին թիւրիմացութիւններ առաջ չը բերելու։ Զգոյշ լինել հարկաւոր է, բայց վերջնել խուլարկում և զինաթափ անողի դեր—բոլորովին անտեղի է։ Փոխանակ լու հետեւանքների, նա կարող է վատնդներ առաջ բերել։

—

Թիֆլիսի սոցիալ-դէմօկրատական բանւորական կազմակերպութեան կողմից նոյեմբերի 21-ին Նախալովկայում հրաւիրված տասնեակ հազարանոց ժողովրդական միտինգը ընդունել է հետեւեալ բէզոլիւցիաները.

I

Ի նկատի առնելով, որ ականատեսների և կազմակերպութեան պատգամաւորների անմիջական դիտողութիւնները հաստատում են, որ Դանձակի հայ-թրքական վերջին կոտորածը նախապատրաստուել, կազմակերպուել և ղեկավարուել է Դանձակի ամբողջ տեղական ադմինիստրացիայի կողմից, զինուորական-նահանգապետ Տակայշվիլու ղեկավարութեամբ, Թիֆլիսի սոցիալ-դեմօկրատական բանւորական կազմակերպութեան կողմից հրաւիրված ժողովրդական միտինգը պահանջում է բարձր իշխանութիւնից հեռացնել երեք օրվայ ընթացքում զին.-նահանգապետ Տակայշվիլուն և Դանձակի ամբողջ ադմինիստրացիան։ Այս պահանջը չկատարելու դէպքում, միտինգը հրաւիրում է ազգաբնակութեան բոլոր դասակարգերին պատրաստվել ամենաեռանդուն յեղափոխական քայլերի համար՝ կառավարութեան դէմ։

II

Թիֆլիսի սոցիալ-դեմօկրատական բանւորական կազմակերպութեան կողմից հրաւիրած ժողովրդական միտինգը, տեղեկանալով Սև ծովի նաւատորմի ապատամբութեան և զօրքի մէջ տեղի ունեցող լայն յեղափոխական յուզմունքի մասին, ողջունում է, հրացած, ապատութեան բոլոր այն մարտիկներին, որոնք դուրս են եկել զինուորների և նաւաբարների միջից, և պահանջում է կառավարութիւնից բաւարարութիւն տալ նրանց բոլոր այն պահանջներին, որոնք նպաստում են զինուորների և նաւաբարների կենսական դրութեան բարւօքման։

III

Ի նկատի առնելով, որ չը նայած հոկտեմբերի 17-ի մանիֆեստում ազդարարած միութիւնների ազատութեան, Վիտտէի կառավարութիւնը զրկել է այդ ազատութիւնից պօսա-հեռագրական բաժնի ծառայողներին—ինչ աւելորդ անգամ ապացուցում է յետադէմ քաղաքականութեան շարունակութիւնը Վիտտէի կողմից, —Թիֆլիսի սոցիալ-դեմօկրատական բանւորական կազմակերպութեան կողմից հրաւիրված ժողովրդական միտինգը արտայայտում է իր համակրանքը և խոստանում իր աջակցութիւնը պօսա-հեռագրական բաժնի պաշտօնեաների միութեան կողմից առաջադրած պահանջներին, պահանջում է հեռացնել Դուրնովոյին և Սեվաստիանովին, պահանջում է տալ պօսա-հեռագրական բաժնի պաշտօնեաներին միութիւնների իրաւունքը և յետ ընդունել վռնդված պատգամաւորներին։ Միտինգը հրաւիրում է ազգաբնակութեան բոլոր դասակարգերին մղել վճռական կռիւ Վիտտէի բիւրօկրատական կառավարութեան դէմ և դեմօկրատական կազմի կառուցման համար։

—

Կիրակի, նոյեմբերի 20-ին «Թիֆլիսի ժողովարանի ամառային այգու բոմբոնդայում կայացաւ Բաքմիս վաճառականներից հավաքված մի խմբի խորհրդակցական ժողով։ Այդ ժողովի գլխաւոր և միակ պարապմունքի խնդիրն էր տիրոջ անապահով վիճակի դէմ միջոցներ որոնել անձի և գոյքի ապահովութեան համար։ Նախ վճռվեց յայտնել ժողովի կողմից անբարեկամութիւն վաճառականների աւագ Ի. Ա. Շաղինովին, որը ոչ միայն չէ հոգացել այս պիսի ճգնաժամին ժողով կազմելու վաճառականներից, այլ մինչև անգամ չէ եկել մասնակցելու ներկայ ժողովին և երկրորդ՝ անձի և գոյքի ապահովութեան համար ընդդէմ ամեն պատահարի՝ ընտրել 25 հոգուց կազմած մի մասնաժողով, որոնք հրաւիրելով հարկաւոր դէպքում և ուրիշ վաճառականներ՝ պիտի մըշակեն մի շարք միջոցներ այդ նպատակի համար և յետոյ ներկայացնեն ի քննութիւն ժողովի։ Նախագահում էր Կ. Ի. Ալիխանով։

—

Քաղաքիս մէջ գողութիւնները քանի գնում են վերին աստիճանի յանդուգն կերպարանք են առնում. ոստիկանները շատ տեղերում չէղոքացրած են և իրանց անզօրութիւնը աշկարայ յայտնում է կողոպտված բնակիչներին։ Այսպէս, օրինակ, նոյեմբերի 18-ին քաղաքիս ամենաբնակեալ փողոցում, իշխան Վաղոնցովի արձանի մօտ՝ կօշկակար Պապիկեանի խանութը անյայտ գողերը կոտրել և բոլոր մէջի նիւթերը և պատրաստի կօշկեղէնը մինչև 300 ռուբլու տարել են։ Բնորոշ է այն հանգամանքը, որ իշխան Վաղոնցովի արձանի մօտ մշտապէս երկու ոստիկան են նշանակված և իրանց քթի մօտ կատարվող գողութիւններին անտարբեր աչքով են նայում։ Կարելի է պատկերացնել՝ թէ խալ ու մութ փողոցներում ինչ են պատահում քաղաքիս մէջ վրնտող մութը ու անգործ մարդկանց ձեռքով։

—

Կիրակի, նոյեմբերի 20-ին, Մուշայիդի բոմբոնդայում Բաքմիս սափրիչները նոյնպես ժողով ունեին, որի մէջ խօսելով ժամանակի նորագոյն պահանջների մասին՝ վճռեցին յարել սոցիալ-դէմօկրատական բանւորական դասակարգին, որոշ տուրք տալ յօգուտ այդ դասակարգի գանձարանին և իրանց մէջ ծագող վիճելի խնդիրները և տարաձայնութիւնները ներկայացնել սոցիալ-դեմօկրատ բանւորական կոմիտէի քննութեան և խուսափել բիւրօկրատիք դատարաններից։ Այս նպատակով ժողովը ընտրեց իր մէջից երեք պատգամաւոր։ Բացի այդ՝ գուրիացիներին համարելով առաջնարդեկ Կովկասում ազատագրական շարժման գործում՝ վճռեցին իրանց համբարի մէջ հանգանակութիւն բանալ յօգուտ նրանց ձգնված ընտանիքների։

—

Մեր քաղաքը զանազան տարօրինակ և նոր-ելուկ երեւոյթների տեսարան է ներկայացնում Ռուսաստանի ընդհանուր ազատագրական շարժման օրերից։ Այդ երեւոյթներից աչքի է ընկնում ժողովրդի զանազան կուսակցութիւններից կազմած նոր «ժողովրդական դատարանը»՝ որպէս հակադիր պատկեր բիւրօկրատիք հարատանջ դատարանի։ Նոր դատարանի անդամները մանաւանդ անողոք են քաղաքիս «չիրգինների» հետ, որոնք սունկի պէս բուսել են և անհետացնում են ամեն օր ձեռնածուներն նախանձելի ճարպիկութեամբ ծոցի ժամացոյցներ, քսակներ և պատահած քիչ թէ շատ արժէքաւոր իրեղէններ։ Նոյեմբերի 19-ին մենք ականատես էինք այսպիսի մի տեսարանի. նորածին «ժողովրդական դատարանի» անդամները իշխ. Վաղոնցովի արձանի մօտ բռնել էին մի «չիրգիր» և երեսին մուր քսելով՝ յատուկ թափօր էին սարքել և շրջեցնում էին փողոցէ փողոց՝ ցոյց տալով թափորի շուրջը հաւաքվող բազմաթիւ անց ու դարձ անողներին «չիրգիրի» կերպարանքը։ Այդ դատաւորներից «մազալան» իր դատարանը պահում է Վերայի Ծղնեթի փողոցում և յայտնի է «Գարօ» անունով։ Սա «դատարանի» անդամների հետ բռնած չիրգիրին էշի վրա նստացնում և մուր քսելուց յետոյ երեսներին՝ դնում է ձեռներին սև դրօշակ, մակագրութեամբ կարմիր տառերով «ես գող եմ» և շրջեցնելով փողոցէ փողոց, յանձնում է վերջը ոստիկանութեանը։

—

Նոյեմբերի 15-ին, ցերեկվայ 2 ժամին, Մօսկվայում պէտք է կայանար Եանօվսկու բէֆէքտորը «Մեր յեղափոխութիւնը» վերնագրով։ Ժողովի սկզբին եկաւ պրիստաւը և յայտնեց, որ եթէ էս ժամից յետոյ հասարակութիւնը չը հեռանայ, գործ կը դնվի զինուորական ոյժ։ Ժողովը որոշեց ցրվել։ („Русск Газ.“)

—

Վերջին օրերս բօրսաներում վճռտ տրամադրութիւն է նկատվում. օրից օր իջնում են պետական ֆոնդերը, ընկնում են ամենահաստատուն արժէթղթերի գիները։ Պետական բէնսան նոյեմբերի 16-ին գնահատվում էր 82½-ով, բայց այդ գնով անգամ գնողներ չէին գտնվում։ Կալուածական բանկերի գրաւական արժէթղթերը իրական, շատ աննշան տուր և առի ժամանակ իջան մինչև 79. վիճակահանութեան փոխառութիւնները նորից ընկան 10 ռուբլիով։ Բօրսային շրջաններում այդ բանը բացատրում են նոր ընդհանուր գործադուլի երկիւղով, որը կարող է ազդանշան դառնալ արդիւնաբերական և ֆինանսական կատաստրոֆայի համար։ Պետերբուրգից ստացված վերջին տեղեկութիւնների համեմատ, շատ գործարաններ և գործատներ արդէն փակվում են։ Ահագին քանակութեամբ առաձեռն շրջանառական միջոցներ արտասահման են ուղարկվում։ Մեզ հաղորդեցին, որ վերջին ամսվայ ընթացքում մօտ 50 միլիոն ռուբլի փոխադրված է Լօնդոն և Բերլին։ Գործարանական խոշոր ձեռնարկութիւններ, որոնց մէջ զբաղված են տասնեակ հազարաւոր բանւորներ, արդէն լուրջ կերպով մտածում են աշխատանքները դադարեցնել երկար ժամանակով, մինչոցների պակասութեան պատճառով։ Այդպիսի պայմաններում բանւորական շարժման զեկավարների վրա ահագին պատասխանատուութիւն է դրված։ Նրանք պէտք է գիտենան, որ նոր գործադուլ անելով, վտանգի տակ են դնում ոչ թէ գործատերերի գոյութիւնը, այլ բանւորների վիճակը։ Ոչինչ միջոցներով չէ կարելի մոցնել 8 ժամվայ բանւորական օր և այլ սոցիալական ռեֆորմներ, եթէ երկար ժամանակ աշխատանք չը լինի։ („Русск. Вѣд.»։

—

Պետերբուրգի բանւորները արդէն մի քանի օր է, որ յուզման վիճակի մէջ են։ Մէկ մի-ութնոյն փոխարինում է միւսը. լինում են միաժամանակ մի քանի միտինգներ։ Ամեն տեղ և ամենուրեք մեկ դէվիզ է—օգնել արձակված ընկերներին և պնդել փակված գործարանները բանալու վրա։ Շարժումը գնալով աճում է և բռնում է արդէն ամբողջ գաւառը, ուր այս օրերս ուղղորդեցին բանւորների պատգամաւորների խորհրդի պատուիրակները նոր համառուսական գործադուլ քարոզելու համար։ Այդ գործադուլը, ճիշտ տեղեկութիւնների համեմատ, պէտք է սկսվի նոյեմբերի 21-ից կամ 22-ից։ Ընդամենը, բանւոր պատգամաւորների խորհրդի տեղեկութիւնների համեմատ, միմիայն Պետերբուրգում արձակված բանւորներ հաշուում են 110,000 մարդուց աւելի։ (Թղթակից. «Русск. Вѣд.» լրագրի)։

—

«Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ նոյեմբերի 16-ին Պետերբուրգում խմբական խուզարկութիւններ կատարվեցին։ Զինուորներից կալանաւորված են մինչև 200 մարդ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ զինուորական էլեկտրօտեխնիկական դպրոցի զինուորների կալանաւորման ժամանակ Սեմեոնովսկի և Էքսրկի գնդերը հրաժարվեցին կալանաւորել էլեկտրօտեխնիկներին։

—

Այսօր Պետերբուրգում յամառութեամբ լուրեր են պատում Սեվաստոպոլի դրութեան վատթարանալու մասին։ Թէպէտ և ծովային մինիստրութիւնից ոչինչ տեղեկութիւններ չեն տալիս, բայց լուրը հասաւ, որ մնացած էսկադրան էլ մտցել է «Օչակով» զրահապին և բարձրացրել է պատերազմական դրօշակներ։ Այդ պատճառով ափի վրա ապատամբած նաւաստիները հանդիսաւոր կերպով մոնում են քաղաք մեռելքների համար։ Ցամաքային զօրքերը թողնում են նրանց անցնել, հրացաններ չարձակելով։ Ինչպէս մեզ աշխղվեց իմանալ նաւաստիական մի օֆիցէրից, Սեվաստոպոլի դրութիւնը չափազանց լուրջ է համարվում և համարեա անյուսալի՝ հեռագրական ծառայողների սկսած գործադուլի պատճառով։ («Русск. Вѣд.»։

—

Լուրերի համեմատ, դէպի երկաթուղիների գլխաւոր հանգոյցները ուղարկվում են զինուորական տելեգրաֆիստներ ի նկատի ունենալով, որ կարող են տեղի ունենալ երկաթուղիական տելեգրաֆիստների գործադուլներ, մի բան, որ կարող է խախտել գնացքների կանոնաւոր երթեւեկութիւնը։ Русск. Вѣд.

—

Նոյեմբերի 15-ին կոմս Վիտտէն ընդունեց մամուլի ազատութեան դաշնակցութեան պատգամաւորութիւնը, որի մէջ մտնում էին՝ Մ. Ա. Սուվորին, Բատիշչով, Կուզմին-Կարաւաև, Սաբլինին և Խոզակիչ։ Պատգամաւորութիւնը յայտնեց մինիստրների խորհրդի նախագահին, որ անհրաժեշտ է ազատել բանտից գրականագէտ Սէրաշչէվսկուն։

—

«Слово» լրագիրը հաղորդում է, որ երէկ, երը մամուլի ազատութեան դաշնակցութեան պատգամաւորութիւնը ներկայացաւ կոմս Վիտտէին, վերջինս, պատգամաւորութեան անդամների հետ խօսակցելու ժամանակ ասեց, որ զինուորական դրութիւնը Լեհաստանում դրկում է նրան հնարաւորութիւնից այդ երկրի վերաբերմամբ ձեռք առնել այն միջոցները, որ նա անհրաժեշտ է համարում. «Ահա, օրինակ, գրականագէտ Սէրաշչէվսկու կալանաւորումը և զինուորական դատարանին ենթարկելը, որին ես շատ գնահատում եմ, բնաւ անյայտ էր, և այդ բանը իմացայ մամուլոր հաղորդագրութիւնից։» Պատգամաւորութեան անդամներից մէկի խնդրքին՝ թոյլատրել նախկին քահանայ Գապօնին ապրել Ռուսաստանում, կոմս Վիտտէն պատասխանեց. «Դուք ուշացաք ձեր խնդրքով. Գապօնը վաղուց Գերմանիայի հարցին, մինիստրների խորհրդի նախագահը կրկնեց. «Ես առանց Սկալօնի այնտեղ կատարելապէս ոչինչ չեմ կարող անել։»

—

Նոյեմբերի 15-ին պետական խորհուրդը, բոլոր 4 դէպարտամէնտների միացեալ ատեանում, քաղաքացիական և հոգեւոր գործերի դէպարտամէնտի նախագահ Գօլուբէվի նախագահութեամբ, քննում էր կրօնը վերաւորելու յանցանքը թեթեւացնելու հարցը առանց դատաւորների խորհրդի։ Հարցը քննվում է սենատոր Մանուխինի առաջարկութեամբ։ Ներկայումս հաւատը հայհոյելու յանցանքի համար շատ ծանր պատիժ է սահմանված։ Ամենամեծ պատիժը այդպիսի յանցանքի համար երկու տարով բանտարկութիւն է։ Արդարադատութեան մինիստրը առաջարկում է իջեցնել պատիժը մինչև 3 ամիս բանտարկութիւն և միայն բացառական դէպքերում սահմանել վեցամսեայ բանտարկութիւն։ Ներկայ եղողների մեծ մասը համակրեցին վերաբերվեցին նախագծին։ Վճիռը յետաձգվեց մինչև հետեւեալ նիստը։ «Н. Ж.»

—

Վարշավայի գեներալ-նահանգապետ Սկալոն եկաւ Պետերբուրգ։ «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ նրա հրաժարականը վճռված է։ Այդ հրաժարականի հետ կապ ունի և այն, որ հեռեւեալ կիրակի սպասվում է զինուորական դրութեան վերացումը Լեհաստանի Թագաւորութեան մէջ։

—

«Русск. Вѣд.» լրագրի մէջ կարդում ենք. «Մենք տեսանք Թիֆլիս քաղաքի պատուիրական իշխան Արղութեան-Երկայնաբազուկից մի նամակ, որով նա խնդրում է ուղղել այն սխալները, որոնք մտել են զէմտվային և քաղաքային գործիչների համաժողովում իր ասած խօսքը հաղորդելու ժամանակ։ Լեհաստանի քաղաքական մասին իշխան Արղութեանն ասել է, որ թէ վրացիները և թէ հայերը խորին համակրութեամբ են վերաբերվում Լեհաստանի ինքնավարութեան։ Խօսելով վրացիների և հայերի գաւառների մասին, նա ի մէջի այլոց համաժողովի ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրա, որ այդ ազգերը տարբեր դրութիւն ունեն ինքնավարութիւնը իրագործելու խնդրում։ Վրացիները զրաւած ունենալով արեւմտեան Անդրկովկասը, ունեն միապաղաղ տէրրիտորիա, համարեա միացեալ վրացի ազգաբնակութեամբ և այդ պատճառով, հասկանալի է, կարող են ինքնավարութիւնը իրագործել հոգային սկզբունքի հիմքի վրա։ Ինչ վերաբերում է հայերին, որոնք բնակվում են գլխաւորապէս արեւելեան Անդրկովկասում, պիսպազաղ, միայն իրանցով բնակեցրած հող չունեն, այնպէս որ մի քանի գաւառներում նրանք աւելի շատ են թուրքերից, իսկ մի քանի գաւառներում էլ թուրքերն են մեծամասնութիւն կազմում։ Այդպիսի պայմաններում անդրկովկասեան հայերի ինքնավարութեան իրագործումը կարող էր լուրջ դժուարութիւնների հանդիպել։ Այդ պատճառով հայերի համար աւելի յարմար կը լինէր իրագործել անդրկովկասեան բոլոր ազգերի ֆէդերացիան, և ոչ թէ իւրաքանչիւր ժողովրդի առանձնապէս։ Ֆէդերացիայի իրագործումը, ի հարկէ, հնարաւոր կը լինի միայն երկրի վերոյիշեալ երեք ազգերի համաձայնութեան պայմանով։

—

Նոյեմբերի 15-ին, բանւորական ժամերը պակասցնելուն չը համաձայնվելու պատճառով, Մոսկվայում փակվեցին 25 գործարաններ և գործատներ, որոնց մէջ բանում էին 30,430 բանւորներ։

—

Նոյեմբերի 16-ին Պետերբուրգից Մոսկվայի վրայով Նովօչէրկասկ գնաց իր ազգականների մօտ Մ. Վ. Պօպով, որին արձակեցին Շլիսէլբուրգեան բերդից, ուր բանտարկված մնացել էր 23 տարի։ Մ. Վ. Պօպովին ուղեկցում էին ծպտեալ ժանդարմներ։ („Р. В.“)

—

Մոսկվայի գեներալ-նահանգապետի դիւանատանը ներկայումս իւրաքանչիւր օր տրվում են մօտ 100 արտասահմանեան անցագիրներ։

—

«Անպայման արժանահաւատ աղբիւրից» լրագիրները հաղորդում են, որ Օդէսսայի նախկին քաղաքապետ Նէյդգարդտ նշանակվում է Նիժեգորոդի նահանգապետ։ Հաւատացնում են, հէնց իրան՝ կոմս Վիտտէի խօսքով, որ մինիստրների խորհրդի նախագահը ոչինչ չը գիտէր այդ նշանակման մասին, որը տեղի է ունեցել «գաղտնի ուսման կառավարութեան» հրամանով։ Արդէն յաճախ էին հանդիպում ակնարկներ մի այդպիսի կառավարութեան գոյութեան մասին։ Ասում էին, որ Լեհաստանում զինուորական դրութիւն յայտարարելը տեղի է ունեցել գաղտնի կառավարութեան կարգադրութեամբ, իսկ յայտնի կառավարութիւնը իմացել է այդ կարգադրութեան մասին արդէն „Правительственный Вѣстникъ“ լրագրից, և այդ լուրը մինչև այժմ չէ հերքված։ Մենք մամլիսան կանգ չենք առնի այն բանի վրա, որ անհնարին է երկու կառավարութիւնների գոյութիւնը միաժամանակ. մենք մամլիսան խօսել ենք դրա մասին մեր լրագրի № 297-ում։ Մենք միայն ուշադրութիւն ենք դարձնում «արժանաւոր» լուրերի վրա Նէյդգարդտի նոր նշանակման մասին, որոնց չէին ցանկանայ հաւատալ։ Ումից որ նշանակված լինի նոր պաշտօնի համար Օդէսսայի նախկին քաղաքապետը, որին շրջակը և մամուլը աշխարայ անուանում են «սև հարիւրական ջարդի կազմակերպող», բայց և այնպէս այդ փաստի վրա չէ կարելի ուրիշ կերպ նայել, եթէ ոչ որպէս կուսի յայտարարում հասարակական կարծիքին, որպէս մեկը այն միջոցներից, որոնք խաղաղ մարդուն դարձնում են ծայրպեղ, որպէս պատանուն անիշխանութեան։ Մի ամբողջ ընթացքում մամլիպէսը հրատարակելու օրից նրա ամրապնդման համար ոչինչ չէ արված և, ընդհակառակն, խիստ շատ բան է արված, որպէս զի անվստահութիւն ներշնչվի դէպի կառավարութեան անկեղծութիւնը։ („Русск. Вѣд.“)

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են. «Նոյեմբերի 19-ին Երեւանի նահանգական դատարանում, զանազան նիստում քննվելու էր յայտնի հայդուկապետ Միհրան Քէշիշեանի և իր 28 ընկերների գործը։ Մեղադրեալների պաշտպաններից մէկը, հռչակաւոր փաստաբան Օսկար Գրուզենբերգը Պետերբուրգից հեռագրել էր դատարանի նախագահին, որ անկարող է նոյեմբերի 19-ին լինել Երեւանում։ Չէին եկել նաև վկաների մեծ մասը։ Դատարանը որոշեց գործը յետաձգել։ Մեղադրեալների միւս պաշտպանները, երդուեալ հաւատարմատարներ Ի. Մելիք-Ազատեան և Տ. Յովհաննիսեան խնդրեցին երաշխաւորութեամբ բաց թողնել մեղադրեալներից 12 հոգու, որոնք տարի ու կէս բանտում էին։ Դատարանը յարգեց պաշտպանների խնդիրքը և կարգադրեց իսկոյն և եթէ արձակել բանից բոլոր բանտարկված մեղադրեալներին, որոնց թւում է ինքը Միհրան Քէշիշեանը։»

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուվիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամենեցուն, բացի կիրակի օրերից,
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մեզասեռ. հ.
ԶԻՒՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՏՐՆ-ԲԺԻՇԿ ՇԱՐԻՐԻՆԵՆ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ճ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՌԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ և ծաղկահատ։
Ե. Ֆ. ԱԲԵԱՆ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԾԱԶԻԱՆԻ. հատարում է մկանա-ջիղային և քակտերիոլոգիական հետազոտութիւններ։
Վճարը 50 կ. դեղատները ձրի։ Համախորդի (կօնսիլիումի) և օգնության համար առանձին։
Հիւանդասենեակ վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական ժամճամալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱԶԱՆՆԵՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ականջ, քիթ, ներքին հ. և երեխայոց-բուժութիւն։
Գ. Ն. ԴՆԻՊՈՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱԼԵՔՍԻՊԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿՈՒՄՈՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՅԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդասենեակ բժշկում են հիպնօզով, կատարվում էլեկտրօսկոպիական, քակտերիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ատամների (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ։ Օպէրացիայի և համախորդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։
(չ.ու.կ.) 20—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանանգէտ միզասին, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անփոխն Գօլովինսկի պրոսպեկտի և Կարմոսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարմոսկի փողոցից № 2.
(ա. օ.) 58—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՁԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեմամիսօկսկայա փողոց № 8. (ե.ա.)24—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և առանձնացավ իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 26—100

ԲԺ. Ա. ՄԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլոլակի, անփոխ Բերաւսօվսկի և Պասկեվիչյա փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-ղ գիմնազ. տուն)։
(ա.օ.) 22—100

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
ասցէ—Արասարդեան հրապարակ № 9, մուտքը Շելկօվնիկեան փողոցից № 1։
(եր.հ.կ.) 9—20

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ
Մանանգէտ—քթի, կոկորդի և ականջի։ Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ. երեկ. 5—7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Ֆօրբերի № 157. 7—10

ԲԺՇ. Մ. ԶԱԼԵԱՆ
Ընդունում է ներքին հիւանդութիւններով Գանձակում, Դօնսկոյսկայա փողոց, տուն Զախարովի, № 22. 3—5

Զուրբայի հայոց դպրոցի համար հարկաւոր է ռուսաց լեզուի, ռուսաց վայելչագրութիւնն և թուաբանութիւնն ուսուցիչ։ Շաբաթական 24 դաս։ Տարեկան 450 ռուբլի առձիկ, հաշուելով ուսուցչի Ղուբա ժամանելու օրից. բնակարան, ծառայ, վառելափայտ, և լուսաւորութիւն։ Դիմել՝ Куба, ктитору Аветису Мартиросяну. 3—4

Բաղումում անցեալ հոկտեմբերի 20-ին խռովութիւնների ժամանակ կորել է Բանանց գիւղի բնակիչ
ՍԵՐԳԵՅ ՄԻՔԱԷԼԻԵՆՑ ՏՈՆԵԼԻՆՑԸ
Նրա հայր Միքայէլը գնացել է Բագու որդուն փնտրելու, բայց չէ գտել. գուցէ փախել